

**ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ,
ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ, ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՏԵՂԱՔԱՇԽՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՆԱԽԱԳԻԾ**



**ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ**

Մաս I. Ընդհանուր դրույթներ.....	2
1. Ներածություն.....	2
2. Օրենսդրություն, նորմատիվապետիկական և ԵԽ-ի կողմից ընդունած փաստաթղթեր.....	3
3. Տարածքին վերաբերող քաղաքաշինական ծրագրային /տարածական պլանավորման/ փաստաթղթեր.....	4
4. Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում քաղաքաշինական գործունեությանը ներկայացվող հիմնական պահանջները.....	4
5. Քաղաքաշինական գործունեությունը Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում.....	5
Մաս II. Քաղաքաշինական գործունեության իրականացման կանոնները.....	6
6. Կենտրոնական և անմիջական ազդեցության էկոլոգիական գոտիներում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները.....	6
Մաս III. Սևանա լճի ափամերձ տարածքների ռեկրեացիոն տարածքների ընդարձակման ուղղությունները.....	8
Մաս V. Քաղաքաշինական, ճարտարապետական և լանդշաֆտային չափորոշիչներ և նախագծման կանոններ.....	10
7. Լողափի և լողափի բուֆերային գոտիների կազմակերպում.....	10
8. Բնական լանդշաֆտների պահպանման և պլանավորման հիմնական սկզբունքները.....	18
9. Տուրիստական և առողջարարական ռեսուրսներ.....	24
10. Զբոսաշրջային ճանաչողական արահետներ.....	27
11. Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներին և դրանց որակական կազմին ներկայացվող պահանջները.....	31
14.1. Ավտոմոբիլային ճանապարհների կանաչապատում. Տրանսպորտային գոյու և լողափի բուֆերային գոյու միջև բաժանիչ կանաչապատման գոյի.....	36
14.2. Լողափի բուֆերային գոյու եզրագծային կանաչապատում.....	38
14.3. Բնական լանդշաֆտի պահպանման գոյու միջով անցումների կանոնակարգում՝ ընդհանուր օգտագործման կանաչ հարվածների միջոցով.....	40
14.4. Ուղղանկյուն մոնոլիտ կանաչ տարածքներ, կառուցապատման գոյիների միջև բաժանիչ կանաչ շերտեր.....	42
14.5. Կանաչ զանգվածներ.....	45
12. Բարեկարգման և կանաչապատման կանոններ՝ թույլատրելի բուսատեսակներ և տեղադրման սկզբունքներ (ուղղաձիգ կանաչապատում, ճամփեզրեր, ցանկապատում՝ քամու, արևի և այլ գործոններից).....	48
13. Կառուցապատման հորինվածքային և ճարտարապետահատակագծային սկզբունքներ.....	53
14. Կառույցների առանձին տարրեր. պատեր, տանիքներ, պատուհաններ, դռներ և այլն: Թույլատրելի գունային լուծումներ (պալիտրա) և շինարարական նյութեր.....	55
15. Փոքր ճարտարապետական ձևեր. ցանկապատեր, նստարաններ, լուսամտիկներ, շատրվաններ, ջրավազաններ, լողափերի կահավորանք, բաց և փակ առևտրի կետեր և այլն.....	60
16. Ճանապարհների, անցումների, մայթերի ծածկույթներին և կահավորանքին ներկայացվող պահանջները, ինժեներական գծերի և սարքավորումների տեղադրման կանոնները.....	73
17. Լուսավորության համակարգի տեղադրման կանոնները.....	75

Մաս I. Ընդհանուր դրույթներ

1. Ներածություն

Սևանա լճի ջրհավաք ավազանը ամբողջական էկոհամակարգ է, որի կենսունակ, կայուն զարգացման համար անհրաժեշտ է դրա վրա ազդող բոլոր գործոնների փոխկապակցված բարելավումն ու կանոնակարգված օգտագործումը:

«Օրենսդրությամբ Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության էկոլոգիական գոտիներում ընդգրկված տարածքները, ըստ կառուցապատման ռեժիմների տարանջատված են միմյանց հարող ենթագոտիների, որոնցում իրականացվող գործունեությունը պետք է ենթարկվի առկա փխրուն էկոհամակարգը չվնասելու սկզբունքին և ուղղված լինի բարձրորակ քաղաքաշինական և բնական լանդշաֆտների ստեղծմանն ու պահպանմանը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N1563-Ն որոշմամբ հաստատված ժամանակացույցի (N3 Հավելված)՝ նախատեսվում է լճի մակարդակի բարձրացումը մինչև 1903,5 մ նիշը (ալիքի ազդեցության հաշվառմամբ՝ 1905.0 մ): Արդյունքում, «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտին կնվազի շուրջ 62.0%-ով, տնտեսական գոտին՝ շուրջ 21.0 %-ով, արգելոցային գոտին՝ շուրջ 53.0 %:

Սևանա լճի կառուցապատման համար նախատեսված ավիամերձ տարածքները, ունենալով ռեկրեացիայի, առողջարանային և տուրիզմի զարգացման համար անհրաժեշտ նախադրյալներ, լի են անկանոն, ցածրարժեք գեղագիտական որակ ունեցող և բացահայտորեն ոչ ներդաշնակ կառույցներով, այդ թվում՝ ինքնակամ և նորմատիվների խախտումներով կառուցված շենքերով ու շինություններով:

Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում ռեկրեացիոն, լանդշաֆտային, առողջարանային համակարգերի տեղաբաշխման և տարածքային կազմակերպման կոնսոլիդացված նախագծի մշակումը, ինչպես նաև «Սևան» ազգային պարկի քաղաքաշինական կանոնադրության, քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչների սահմանումը հետապնդում է ավիամերձ տարածքների քաղաքաշինական և լանդշաֆտային տարածական միջավայրի փոխկապակցված բարելավման, կանոնակարգված զարգացման նպատակ:

«Սևան» ազգային պարկի քաղաքաշինական կանոնադրությունը՝ սահմանելով որոշակի գեղագիտական սկզբունքներ և կանոններ, պետք է ուղեցույց հանդիսանա քաղաքաշինական գործունեություն ծավալող սուբյեկտների համար:

Հաշվի առնելով, որ Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով շուրջ 62.0%-ով կրճատվում է «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտին, վերջինիս տարածքային զարգացման և արդյունավետ օգտագործման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված են «Սևան» ազգային պարկի սահմանից դուրս՝ դեպի ցամաք, կառուցապատման համար նպաստավոր գոտիներում, քաղաքաշինական խնդիրների կանոնակարգմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

Միևնույն ժամանակ, «Սևան» ազգային պարկի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև համապատասխան չափորոշիչների սահմանումը կարող են ծառայել որպես ուղեցույց՝ նաև պարկի տարածքներին հարակից համայնքներում քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար:

2. Օրենսդրություն, նորմատիվադեֆինիվական և ետ-ի կողմից ընդունած փաստաթղթեր

- «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը,
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը,
- Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը,
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը,
- «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքը,
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» N 1563-Ն որոշումը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» N 205-Ն որոշումը,
- «Սևան» ազգային պարկի կանոնադրությունը», ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշումը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի «Հողի բերրի շերտի օգտագործման մասին» N1622-Ն որոշումը,

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N967-Ն որոշումը:
- Նորմատիվադեֆինիկական փաստաթղթեր, մասնավորապես՝ “Градостроительство. Планировка и застройка городских и сельских поселений”, СНиП 2.07.01-89, М. 1989г., “Благоустройство территории”, СНиП III-10-75, М. 1975г.,
- Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրեր, մասնավորապես՝ «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիա», Ֆլորենցիա, 2000 թ.:
- Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների «Ափամերձ գոտիների կառավարման մոդելային օրենք և ափամերձ գոտիների կառավարման Եվրոպական նորմեր», (European Code of Conduct for Coastal Zones, CO-DBP (99) 11, Geneva, 19 April 1999),
- «Եվրոպայի Մայրցամաքի Կայուն Տարածական Զարգացման Գերակա Սկզբունքներ», /ընդունվել է Եվրախորհրդի Անդամ Պետությունների Նախարարների Կոնֆերանսի (CEMAT) կողմից և հաստատվել է ԵԽ Նախարարների Կոմիտեի Հանձնարարականով Rec1, 2002թ./:

3. Տարածքին վերաբերող քաղաքաշինական ծրագրային /տարածական պլանավորման/ փաստաթղթեր.

- Հայաստանի Հանրապետության Տարաբնակեցման գլխավոր նախագիծ, հաստատված ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N610-Ն որոշմամբ,
- «Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման նախագիծ» հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի փետրվարի 18-ի N143-Ն որոշմամբ,
- «Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագիծ», հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ,
- Սևան, Մարտունի, Վարդենիս, Գավառ, Ճամբարակ քաղաքային համայնքների գլխավոր հատակագծեր,
- Զկալովկա, Աղբերք գյուղական համայնքների գլխավոր հատակագծեր,

4. Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում քաղաքաշինական գործունեությանը ներկայացվող հիմնական պահանջները.

Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում քաղաքաշինական գործունեությունը պետք է ուղղված լինի կենսագործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, ապահովելով.

- 1) էկոլոգիական հավասարակշռությունը, կենսաբազմազանությունը, բնական լանդշաֆտների պահպանությունը, բնական պաշարների արդյունավետ օգտագործումը, կայուն տարածական զարգացումը.
- 2) բնության առանձնահատկություններին ներդաշնակ, լանդշաֆտների, ռելիեֆի հատկությունները ընդգծող հատակագծային կառուցվածքը.
- 3) քաղաքաշինական միջավայրի սոցիալական որակը և հարմարավետությունը, կառուցապատման միասնականությունը, ինժեներական ապահովումը, տրանսպորտային և կոմունալ-կենցաղային սպասարկումը, տարածքների կանաչապատումը և բարեկարգումը, սպասարկման և ենթակառուցվածքի օբյեկտների, ռեկրեացիոն տարածքների, ընդհանուր օգտագործման տարածքների և հասարակական տարածքների մատչելիությունը, այդ թվում՝ հաշմանդամների համար.
- 4) կայուն տնտեսական և սոցիալական զարգացման համար բարենպաստ քաղաքաշինական պայմանները, բարեկեցության և հարակից համայնքների տնտեսական ինքնուրույնության բարձրացումը, ներդրումների ներգրավումը, ռեկրեացիոն տարածքների ընդարձակումը և բարելավումը.
- 5) հարակից համայնքների հետ փոխկապակցվածությունը և փոխլրացնող զարգացումը:

5. Քաղաքաշինական գործունեությունը Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում.

Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է “Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի “Սևան” Ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին” N1563-Ն որոշման այլ իրավական ակտերով սահմանված դրույթներին համապատասխան:

Քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է բացառապես հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, մասնավորապես ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագծը

հաստատելու մասին» N177-Ն որոշմամբ հաստատված հավելվածին և համայնքների գլխավոր հատակագծերին համապատասխան, հաշվի առնելով սույն որոշմամբ ամրագրված դրույթները:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության էկոլոգիական գոտիներն առանձնացված են որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N1563-Ն որոշմամբ դիտարկվող տարածքը՝ կենտրոնական և անմիջական ազդեցության էկոլոգիական գոտիների որոշակի հատվածների ներառմամբ՝ ըստ կառուցապատման ռեժիմների, տարանջատվում է երեք ենթագոտիների.

- 1) առաջին ենթագոտի՝ Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ջրածածկման և ողողման ենթակա տարածքները, որոնք ներառում են «Սևան» ազգային պարկի լճի ջրային սահմանից մինչև 1905.0 մետր բացարձակ նիշը
- 2) երկրորդ ենթագոտի՝ առաջին ենթագոտու սահմանից դեպի ցամաք՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված «Սևան» ազգային պարկի սահմանը.
- 3) երրորդ ենթագոտի՝ ”Սևան” ազգային պարկի սահմանից դուրս՝ դեպի ցամաք մինչև 500 մետր լայնությամբ շերտն ընդգրկող տարածքները՝ Ծովազարդ, Լճափ, Բերդկունք, Հայրիվանք, Նորատուս, Գավառ, Կարմիրգյուղ, Գեղարքունիք, Երանոս, Վարդաձոր, Ձորագյուղ, Ծակքար, Լիճք, Ն.Գետաշեն, ք.Մարտունի, Վաղաշեն, Աստղաձոր, Ջուլաքար, Վարդենիկ, Ծովինար, Արծվանիստ, Կարճաղբյուր, Լճավան, Ծովակ, Նորակերտ, Գեղամասար, Արեգունի, Դարանակ, Փամբակ, Ծափաթաղ, Զիլ, Արտանիշ, Շորժա, Ազբերք, Դրախտիկ, Կալավան, Ծովագյուղ, Սևան, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն համայնքների վարչական սահմաններում ընդգրկված տարածքային հատվածների ներառմամբ:

Մաս II. Քաղաքաշինական գործունեության իրականացման կանոնները

6. Կենտրոնական և անմիջական ազդեցության էկոլոգիական գոտիներում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները

Կենտրոնական էկոլոգիական գոտու առաջին և երկրորդ ենթագոտիներում պետական սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման ու օգտագործման իրավունքի տրամադրումը իրականացնում է միջգերատեսչական հանձնաժողովը /ստեղծվել է՝ ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N 1578-Ն որոշմամբ/:

Ազգային պարկի հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի և հողամասի նկատմամբ այլ պայմանագրերը կնքվում են ու դրանցում փոփոխությունները կատարվում են «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի Խորհրդի կողմից հավանության արժանանալուց հետո (խորհրդի կազմը հաստատված է ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշման N3 հավելվածով):

ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի «Սևան» Ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին՝ N1563-Ն որոշման համապատասխան տրամադրված հողամասի կառուցապատման կամ օգտագործման իրավունքի մասին պայմանագրերը կնքվում են՝ առաջին և երկրորդ ենթագոտիներում՝ «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ, իսկ երրորդ ենթագոտում՝ համապատասխան համայնքի ղեկավարի հետ:

Առաջին և երկրորդ ենթագոտիներում (կենտրոնական էկոլոգիական գոտի)՝

1) Կառուցապատման նպատակով հողամասերն ու ճարտարապետահատակագծային առաջադրանքները տրամադրվում, ինչպես նաև ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը մշակվում են ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N177-Ն որոշմամբ հաստատված «Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտիավորման նախագծով» սահմանված դրույթներին համապատասխան: Նախագծով ամրագրված են կենտրոնական էկոլոգիական գոտում՝ լողափի, բուֆերային և այլ գոտիների տարանջատումն ու դրանց կառուցապատման չափորոշիչները, նախագծի կազմում մշակվել են նաև առանձին հատվածների կառուցապատման էսքիզներ:

2) ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N711-Ն որոշման 4-րդ կետով սահմանված դրույթի կիրառումը բացառվում է՝ նախագծային փաստաթղթերը պարտադիր ենթակա են փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3) քաղաքաշինական գործունեությունը թույլատրվում է իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բնապահպանական և քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացության դեպքում:

4) կառուցապատման էսքիզները (սխեմաները) հաստատում է պատվիրատուն՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ:

Անմիջական ազդեցության էկոլոգիական գոտում առանձնացված երրորդ ենթագոտում.

- քաղաքաշինական պլանավորման և տարածքների օգտագործման հիմնական սկզբունքները, քաղաքաշինական լուծումների ընտրության կանոնները սահմանվում են տարածքին վերաբերող հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով, ինչպես նաև առաջարկվում են սույն փաստաթղթով:
- Կառուցապատման նպատակով հողամասերն ու ճարտարապետահատակագծային առաջադրանքները տրամադրվում, ինչպես նաև ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը մշակվում են համապատասխան համայնքի գլխավոր հատակագծով և դրա կազմում մշակված գոտիավորման նախագծով սահմանված դրույթներին համապատասխան,
- Երրորդ ենթագոտու՝ "Սևան" ազգային պարկի սահմանից դուրս՝ դեպի ցամաք մինչև 500 մետր լայնությամբ շերտն ընդգրկող տարածքների գոտիավորման նախագծերը և կառուցապատման էսքիզները պարտադիր պետք է մշակվեն համապատասխան համայնքների գլխավոր հատակագծերի մշակման շրջանակներում:
- Մինչև նշված ծրագրային փաստաթղթերի մշակումը, երրորդ ենթագոտում, որպես քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտի տարածքում իրականացվող՝ քաղաքաշինական գործունեության յուրաքանչյուր փուլը /հողահատկացում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրում, նախագիծ/ համաձայնեցվում է ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ:

Մաս III. Սևանա լճի ափամերձ տարածքների ռեկրեացիոն տարածքների ընդարձակման ուղղությունները

Ինչպես հայտնի է, Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով շուրջ 62%-ով կնվազի «Սևան» Ազգային պարկի ռեկրեացիոն գոտին:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ Հայաստանը չունի ծովային սահման և, լինելով լեռնային երկիր՝ չունի նաև լայն ջրառատ գետեր, Սևանա լիճը, որպես միակ մեծ ջրային ավազան՝ չափազանց կարևոր է տուրիզմի և հանգստի գործառույթների կազմակերպման տեսակետից:

Ռեկրեացիոն գոտու զարգացման և ընդարձակման նպատակով՝ Ազգային պարկի սահմանից դուրս դեպի ցամաք 500 մ լայնությամբ շերտը սահմանվել է որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածք, որը պետք է զարգանա առավելապես ռեկրեացիոն գործառույթների հաշվին, տուրիզմի, հանգստի և դրանց համար անհրաժեշտ սպասարկման ենթակառուցվածքի գործառույթների զարգացմամբ:

Նախագծով առանձնացվել է 500 մ գոտու մոտավոր սահմանը, որը սակայն պետք է ճշգրտվի հատված առ հատված՝ Ազգային պարկին հարող համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի մշակման շրջանակներում: Առաջարկվող 500 մ լայնությամբ գոտում կընդգրկվեն ռեկրեացիայի զարգացման և կառուցապատման համար բարենպաստ տարածքները, ինչպես նաև նոր անտառների ստեղծման, բնական լանդշաֆտների բարելավման միջոցառումները:

Սևանա լճի ջրհավաք ավազանի կայուն զարգացման համար անհրաժեշտ է, որ քաղաքաշինական զարգացումը նպատակաուղղվի հավասարակշռված տարաբնակեցման համակարգի ձևավորմանը՝ նվազեցնելով ինտենսիվ և թույլ յուրացված գոտիների միջև զարգացվածության աստիճանի տարբերությունները:

Ռեկրեացիոն գոտու ընդարձակման և ներկայումս ինտենսիվ օգտագործվող կենտրոնական գոտու ռեկրեացիոն տարածքների բեռնաթափման նպատակով՝ Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման նախագծով ուսումնասիրվել են անմիջական ազդեցության էկոլոգիական գոտու ողջ տարածքի բնական ռեսուրսները և որպես նպատակահարմար ուղղություն առաջարկվել է զարգացնել լիճ թափվող գետերի հովիտները և ցածր լեռնալանջերի խորքային տարածքները՝ ձևավորելով այդտեղ ռեկրեացիոն գոտիներ կամ «բուֆերային» տարածքներ:

Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռությունն ուղղակիորեն կախված է լիճը սնող գետերի էկոլոգիական վիճակի բարելավումից: Այդ իմաստով ռեկրեացիոն գործառույթների զարգացման նպատակով գետերի հունների մաքրումը, ափերի ամրացումը, չափավոր և ճիշտ հաշվարկված ջրի բացթողումները, ոռոգման համակարգի վերականգնումը, անհրաժեշտության դեպքում ստեղծումը, ափերի կանաչապատումը, գետերի վրա փոքր ջրամբարների կառուցումը, բարելավելով իրավիճակը, նպաստելու են նաև Սևանա լիճ թափվող մաքուր ջրի քանակի ավելացմանը:

Սևանը, լինելով բարձր լեռնային լիճ, առանձնահատուկ է իրեն շրջապատող լեռնաշղթաներով և դրանք ևս կարող են դիտարկվել որպես ռեկրեացիոն յուրահատուկ տարածքներ՝ էկոլոգիական և ճանաչողական տուրիզմի, ձմեռային սպորտաձևերի զարգացման համար:

Դրա հետ կապված կձևավորվի ռեկրեացիոն օբյեկտների սպասարկման և կլիմայական էքստրեմալ պայմաններում ճանապարհների վիճակի վերահսկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքը, ձմեռային ռեկրեանտների սպասարկման համար տարաբնակեցման նոր ձևերը:

Ռեկրեացիոն տարածքների որակի բարձրացման համար անհրաժեշտ է հանքային և խմելու ջրերի աղբյուրների, գետերի, ճանապարհների, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների շուրջ սանիտարապաշտպանիչ գոտիների սահմանում և կանաչապատում:

Գծագրեր՝

15_1_ Սևանա լճի կենտրոնական գոտի,

15_2_ Լանդշաֆտի վերլուծություն. Ռելիեֆի բարձրություններ,

15_3_ Լանդշաֆտի վերլուծություն. Ռելիեֆի թեքություններ,

15_4_ Լանդշաֆտի վերլուծություն. Լանջերի ուղղվածություններ:

15_5_ Ռեկրեացիոն, լանդշաֆտային համակարգերի տեղաբաշխման և տարածքային կազմակերպման նախագիծ:

Մաս V. Քաղաքաշինական, ճարտարապետական և լանդշաֆտային չափորոշիչներ և նախագծման կանոններ

7. Լողափի և լողափի բուֆերային գոտիների կազմակերպում

Լողափի ճարտարապետահատակագծային լուծումների ընտրությունը պետք է պայմանավորված լինի

- 1) Ջրատարածության /ակվափորիա/ բնույթով և չափերով,
- 2) տարածքի ընդհանուր հորինվածքով,
- 3) բնակլիմայական պայմաններով,

4) տեղի առանձնահատկություններով և ավանդույթներով:

Լողափում հանգստացողների հիմնական գործունեությունը լողն է, արևային լողանքների ընդունումը, հանգստի ակտիվ ձևերը, որի համար և պետք է հարմարեցված լինի որպես լողափ նախատեսված տարածքը:

Լողափի կազմակերպման համար պետք է նախատեսվեն երկու հիմնական գոտի՝ լողափ և լողափի բուֆերային գոտի: Ըստ գործառնական նշանակության պայմանականորեն առանձնացվում են երեք տարբեր գոտի՝ երկուսը լողափի և մեկը բուֆերային գոտիներում:

1) Բուն լողափ՝ ջրի եզրագծից 25մ և ավել լայնությամբ տարածք, հարմարեցված և կահավորված արևային լողանքների ընդունման համար: Այստեղ տեղադրվում են արևապաշտպան տենտեր, հովանոցներ, սոլյարիումներ, օդահարթակ-աերարիումներ, ջրային ատրակցիոններ:

2) Ակտիվ հանգստի 15-40 մ շերտ, որը կազմակերպվում է լողափի գոտու մեջ, անմիջապես շարունակելով բուն լողափի հատվածը: Այստեղ տեղադրում են կիսաստվերոտ խաղա- և սպորտա- հրապարակներ, ինչպես նաև հանդերձարաններ: Այս հատվածում հանգստացողների խտությունը ավելի փոքր է, քան առաջինում:

3) Բուֆերային գոտի՝ պասիվ հանգստի համար կանաչ, ստվերոտ հատված, որը կահավորվում է հանգստի հարթակներով, ճեմուղիներով, բացօթյա տաղավարներով: Անհրաժեշտ է առանձնացնել նաև սպասարկման՝ ցնցուղարաններ, զուգարաններ, դրամարկղային տաղավարներ, գույքի վարձույթի կետեր, բուժկետ, փրկարարական կայան, աղբարկղեր, մանրածախ առևտրի կետեր և մանկական հատվածներ՝ խաղահրապարակներ, մանկական լողավազաններ, ատրակցիոններ:

4) Լողափի և լողափի բուֆերային գոտիների կահավորման ու սարքավորումներով ապահովման տարրերը պետք է համապատասխանեն 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N1563 որոշմամբ սահմանված Տեխնիկական բնութագրերին / N2 Հավելված/:

5) Լողափերը կարող են ունենալ ավազի կամ գլաքարի ծածկույթներ: Լողափի տարածքը պետք է լինի համեմատաբար հարթ՝ դեպի ջուրն իջնող թեքությունը անհրաժեշտ է ապահովել 0.01-ից 0.03-ի սահմաններում:


6) Լողափի տարածքում անբարենպաստ գրունտների դեպքում /տորֆ, տիղմ, բնահող/ պետք է ստեղծվի արհեստական ծածկույթ՝ օգտագործելով բերովի ավազ կամ գլալաքար:

7) Լողալու համար առանձնացված ջրատարածքը պետք է ունենա երկու գոտի, 1.2 մ խորությամբ՝ երեխաների և լողալ չիմացողների և 2մ և ավելի խորությամբ՝ լողալ իմացողների համար: Ջրի հատակը պետք է լինի հարթ, 0.03 –ից ոչ մեծ թեքությամբ:

8) Լողափը նախագծելիս պետք է նախատեսել առնվազն 6մ լայնությամբ կանաչ գոտի՝ որը անցումներով լողափի և բուքերի գոտիները կկապի տրանսպորտային գոտու բաժանիչ կանաչապատ շերտի հետ: Բաժանիչ կանաչ շերտի լայնական կտրվածքը պետք է բացառի մակերևույթային ջրերի հոսքը դեպի լողափ:

9) Լողափը կազմակերպելիս ցանկալի է նախատեսել երեխաների լողալու համար առանձնացված պարփակ ջրավազաններ՝ ջրափոխանակման նպատակով միացված լճի ընդհանուր ծավալի հետ, կամ առանձնացվեն լճափի ոչ խորը հատվածները:

10) Լողափերի կազմակերպման համար նախընտրելի են հարավային, հարավ-արևմտյան, հարավ-արևելյան լանջերը, որոնք ունեն առավելագույն ինսոլիացիա:



Լողափերի կազմակերպման էսքիզային նախագծեր



Գծագրեր՝

19_1_Լողափի կազմակերպում. Կտրվածքներ,

19_2_Լողափի կազմակերպում. Կտրվածքներ:

Լողափերի կազմակերպման օրինակներ

Քարքարոտ լողափ



Սևան


Իդեալական բնապայույթը խաթարում են կապույտ փնակը և ցամաքի անբարեկարգ մակերևույթը

*Սպիտակ ավազե լողափ
Իդեալական լողափ է փոքր երեխաների
հետ ընտանեկան հանգստի համար*





Սևան. Բնապարկեր



Սև գլաքարե լողափ



*Սևան.
Ջրի տակ մնացած ծառերի և բնահողի պատճառով
աղտոտված ջուրը:*



*Վայրի լողափ,
մեկուսացված հանգստի համար*





Սևան.
 Անբարեկարգ լողափ. Չորացած անհրապուրիչ
 բուսականություն, քարեր, պատահական տեղադրված
 շինություններ:

Նեղ լողափի շերտ, որը ընդարձակելու
 համար կազմակերպվել է լողափը կրկնող
 տերաս



Սևան. Թերակղզու տեսարան.
 Առաջին պլանում երեք հարկանի սպիտակ շենքն իր
 մասշտաբով և տեղադիրքով կենտրոնացնում է
 ուշադրությունը իր վրա, աղավաղելով թերակղզու
 բնական ուրվագիծը և ճնշելով եկեղեցու մասշտաբը,
 դարձնելով այն աննշան կետ բնապատկերի վրա

Առանձնացված լողավազան և
 արհեստական լողափ, որը առանձնացված է
 փոքրիկ նավահանգստի գոտուց





Սևան.
Մամուսկալած քարեր

Նեղ լողափնյա տարածքները հնարավոր է
ընդարձակել նաև այսպես



Սևան. Թերակղզու տեսարան
Եկեղեցու ուղվագիծը ներդաշնակորեն ընդգծում է
բնական լանդշաֆտը

Հարթ քարե սալիկներով հրականացված
լողափնյա փողոցի ծածկույթ





*Սևան.
Լողափի տեսարան լճից*

Ջրային մակերեսը կարելի է ընդարձակել նաև այսպես



*Լողափնյա փողոցի բարեկարգում.
Տախտակամածով հրականացված ծածկույթ*

Առափնյա շենքերի տանիքները կարող են ծառայել որպես փոքրիկ այգիներ, հարմարեցված հանգստի և արևային լոգանքների համար





8. Բնական լանդշաֆտների պահպանման և պլանավորման հիմնական սկզբունքները

«Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտիավորման նախագծով» ամբողջ գոտիավորման տարածքի 16% -ը առանձնացվել է որպես բնական լանդշաֆտի պահպանման գոտի (ԲԼՊԳ): Դրանք հիմնականում մեծ թեքություններ ունեցող, տեկտոնական խզվածքին հարակից, ամբողջովին անտառապատված, կամ բնապահպանական նշանակություն ունեցող տարածքներ են:

Տարբեր հիմնավորմամբ լանդշաֆտի պահպանման գոտիներ են առանձնացված Ազգային պարկի գրեթե բոլոր 41 տարածքային հատվածներում, ընդ որում դրանցից 6-ում դրանք կազմում են ամբողջ տարածքի զգալի մասը:

Առկա իրավիճակից ելնելով նախագծով առանձնացված լանդշաֆտի պահպանման գոտիները՝ համեմատաբար մեծ և փոքր մակերես ունեցող իրարից անջատ գտնվող հատվածներ են: Միևնույն ժամանակ, բնական լանդշաֆտի և կենսաբազմազանության պահպանման համար անհրաժեշտ են բավականաչափ մեծ մակերես ունեցող, հոծ բնական տարածքներ, որոնց ստեղծման նպատակով, որպես նախագծային գերակա սկզբունք կիրառվել է դրանց միջև կանաչ միջանցքներով կապերի ապահովումը՝ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների միջոցով:

Քաղաքաշինական և լանդշաֆտային նախագծման պրակտիկայում «բնական» տերմինի տակ հասկանում են բնության փոխկապակցված տարրեր՝ այդ թվում անտրոպոգեն ծագում ունցող /արհեստական անտառներ, պարկեր, ջրամբարներ, այգիներ, քարերից և բույսերից ստեղծված հորինվածքներ, ծաղկանոցներ, սիզամարգեր և այլն/:

Լանդշաֆտի պահպանման գոտիների որոշ հատվածներ ընդգրկում են նաև պատմամշակութային հուշարձանների պահպանման գոտիներ, ինչը փոխլրացնող և լանդշաֆտի պահպանման համար բարենպաստ հանգամանք է:

Բնական լանդշաֆտների պահպանման, վերականգնման և զարգացման սկզբունքները.

1) ապահովել քաղաքաշինական /կառուցապատված/ և բնական լանդշաֆտների հաջորդականությունը.

2) ապահովել լանդշաֆտի պահպանման առանձին գոտիների միջև կանաչ միջանցքներով կապերը.

3) զարգացնել Կենտրոնական գոտում առանձնացված լանդշաֆտի պահպանման գոտիները՝ «Սևան» Ազգային պարկի սահմանից դուրս՝ դեպի ցամաք մինչև 500 մետր լայնությամբ շերտն ընդգրկող տարածքներում, ստեղծելով բնական հատվածների անհրաժեշտ զանգվածներ, որոնք ի վիճակի կլինեն դիմակայելու Սևանա լճի վրա ընդհանուր ռեկրեացիոն բեռնվածությանը.

4) շարունակել ռեկրեացիոն գոտիների զարգացումը, դուրս գալով կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում առանձնացված երեք ենթագոտու տարածքներից և տարածվելով Սևանա լիճ թափվող գետերի հուններով, բարձր լեռնային հատվածներով, հիմնելով տարածքում՝ լեռնագնացության, էկոլոգիական և ճանաչողական տուրիզմի ավանդույթներ.

5) լանդշաֆտի պահպանման գոտիների միատեսակությունից խուսափելու նպատակով՝ զարգացնել դրանք որոշակի գերակայող ուղղություններով, տարբերակելով ըստ տեսակների, օրինակ.

- անտառներ, բուսաբանական այգիներ, դենդրոպարկեր,
- բնապատկերային լանդշաֆտներ՝ առանձին կանգնած ծառերի, մարգագետինների, ջրվեժների, քարերի և բույսերի ներդաշնակ համադրությամբ
- դեղաբույսերի պարտեզներ, դաշտային ծաղիկների մարգագետիններ,
- կենդանաբանական այգիներ /թռչուններ, տարածքին բնորոշ և հազվադեպ հանդիպող կենդանիներ/.

6) լանդշաֆտի պահպանման գոտում արգելվում է որևէ տեսակի կառուցապատում, բացառությամբ լանդշաֆտի զարգացման և սպասարկման համար նախատեսված ցածրահարկ, ոչ հիմնական կառույցների տեղադրման:

7) բնական և արհեստական արահետների և ճանապարհների ցանցը թույլատրվում է իրականացնել միայն բնական նյութերով /առանձին քարե սալերով, տախտակամածով և այլն, այնպես, որ պահպանվի բնահողի ամբողջականությունը: Ասֆալտե ճանապարհների կիրառումը բացառվում է:

Ստորև ներկայացված են մի շարք, մեր կարծիքով լավագույն՝ բնական լանդշաֆտների վրա մարդու ազդեցության և բնական միջավայրի մեջ նրբանկատ ներթափանցման օրինակներ



*Ճապոնական այգի.
Ավազե ծածկույթով հարթակի վրա քարե սալիկներից կազմած մուտքեցում և ասփիճաններ*

Թեթև և նրբագեղ կոնստրուկցիաներով կառուցած կամրջածև արահետ, որը չի խաթարում բնահողի միասնականությունը և ներդաշնակորեն ներգծվում է բնական լանդշաֆտի մեջ



*Ճապոնական այգի.
Սպիտակ ավազ, փայտե պատշգամբ, տախտակամածե հատակ, ծառերի և թփերի նրբագեղ ընտրություն և դասավորություն*

Փայտե ծածկով արահերի ընդհանուր կոնստրուկցիան տեղադրված է ոչ բարձր հենարանների վրա, ինչը թույլ է տալիս պահպանել բնահողի միասնականությունը և չի խոչընդոտում անտառում բնակվող կենդանիների բնականոն տեղաշարժին



Ճապոնական այգի.
Ծովի ալիքներ հիշեցնող սպիտակ ավազ.
Հանդարտություն, կենտրոնացում

Անտառում տեղադրված փոքրիկ տաղավարներ, որտեղ կարելի է պաշտպանվել անձրևից:
Տաղավարների հատակը բարձրացված է ցածր հենարանների վրա:




Քարերով, մանրախճով և թփերով կազմված լանդշաֆտ

*Բնական քարերից և մանրախճից ձևավորված
աստիճան-արահետը.
Քարերի և թփերի համադրությունը ստեղծում է
հետաթրքիր
լանդշաֆտային միջավայր*



www.Gardener.ru



*Ճապոնական այգի, փոքրիկ ջրվեժ և ծառերի
հրաշալի ընդրություն*



*Ճապոնական այգի, անկանոն քարերով կազմած
արահետ*



*Ճապոնական այգի, Սև ճալաքար /գլաքար/,
սպիտակ ավազ և փայտ*



*Ճապոնական այգի, անկանոն քարերով կազմած
արահետ-աստիճան*



Ճապոնական այգի. սպիտակ ավազե արահետ

Ճապոնական այգի. Սառնաղբյուր

Այս հատվածում օրինակների մեծ մասը ներկայացնում են Ճապոնական այգիները: Վերջիններս չեն հետապնդում դրանց կրկնօրինակման նպատակ, այլ ներկայացված են որպես լանդշաֆտային պլանավորման հիմնական սկզբունքի՝ մարդ-բնություն ներդաշնակ փոխազդեցության օրինակներ. սկզբունք, որն անհրաժեշտ է կիրառել այդ թվում նաև՝ Սևանի ափամերձ փարածքներում:

Ճապոնական այգիներում բնության ներդաշնակությունը գերակայում է նյութական կարիքները բավարարելու պահանջին: Լեռները, անտառները, գետերը թվում են բնածին և անձեռակերպ, սակայն իրականում գրեթե չկա անմշակ հող: Բնության հանգրվաններ են ճապոնական այգիները, պարտեզները և կանաչ բակերը: Դրանք ներկայանում են որպես հավասարակշռված բնօգտագործման բարձրագույն արվեստ: Ճապոնական պարտեզները և այգիներն առանձնահատուկ են դրանցում օգտագործված այն բազմաթիվ և բազմազան միջոցներով, որոնց շնորհիվ շեշտակի ուժեղանում է բնության ազդեցությունը մարդու գիտակցության վրա: «Իդեալական լանդշաֆտ» ունեցող փոքրիկ այգիներում մրաօձված է յուրաքանչյուր մանրուք՝ ռեյիեֆը, բույսերի արտաքին ձևը, ճյուղերի քանակը, չափերը, քարերի գույնը և տեղադիրքը: Կատարյալ որակի են հասցված մշակված /քառակուսի, ուղղանկյուն, կլոր/ և բնական /քարե սալիկներ, խիճ, մանրախիճ, ճալաքար, ավազ/ ծածկույթների համադրությունները, սիզամարգերի բազմաթիվ երանգները: Միևնույն ժամանակ այդ բազմազանությունը մնում է զուսպ գունային շրջանակներում՝ գերադասելով սպիտակից – սև, և մոխրագույնից – կանաչ երանգները:

8) Այցելուների համար կազմակերպված արահետները և լեռնային ճանապարհները դուրս բերել դեպի Սևանա լիճը նայող դիտահրապարակներ և հանգստի հարթակներ, որտեղից կբացվեն գեղեցիկ համայնապատկերներ, ափերի ջրային ճակատներ և այլ բնապատկերներ:

9) Լանդշաֆտի պահպանման գոտիներում պետք է կատարվեն նաև էռոզիայի ենթարկվող ափերի ամրացման աշխատանքներ, ծառատունկեր, մարգագետինների բարելավումներ, հատուկ բույսերով լրացումներ և այլն: Այն

հատվածներում, որտեղ գոյություն ունեցող անտառապատված շերտը գտնվում է 1905.0 մ նիշից ցածր անհրաժեշտ է կատարել անտառահատում, կոճղահանում, ինչպես նաև բնահողի տեղափոխում և հնարավորինս փոխարինում ավազով, մանրախիճով, ճալաքարով:

9. Տուրիստական և առողջարարական ռեսուրսներ

Սևանա լիճը զբոսաշրջության կայուն զարգացման համար գերազանց, սակայն դեռևս պատշաճ կերպով չօգտագործված ներուժ ունեցող տարածքն է: Սևանա լիճն իր առափնյա գեղատեսիլ բնաշխարհով ու լողափերով, Սևանի և Արտանիշի թերակղզիներով, լճի ավազանը գոտևորող Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռնաշղթաներով անկրկնելի բնական ժառանգություն է՝ որն առավել կարևոր և հարուստ է դառնում առկա պատմամշակութային հուշարձանների շնորհիվ:

«Սևան» ազգային պարկի և դրան հարակից տարածքներում հաշվառված են բնության, պատմության և մշակույթի թվով 1489 անշարժ հուշարձան (ներառյալ բնության հուշարձանները)՝ քարեդարյան բնակատեղիներ, քարայր կացարաններ, կիկլոպյան ամրոցներ, վանական համալիրներ, եկեղեցիներ ու մատուռներ, ջրաղացներ, անկրկնելի խաչքարեր, բազմաթիվ ժայռապատկերներ: Թվարկված հուշարձանների մոտ 15% -ը (103 հուշարձան) գտնվում է «Սևան» ազգային պարկի տարածքում: Գեղամա լեռներում, Սևանա լճի հյուսիս-արևելյան ափին՝ Վանքի լճի մոտ պահպանվել են Հայաստանի նախաքրիստոնեական մշակույթին բնորոշ երկու վիշապաքար, որոնցից մեծը մոտ 3,5 մ է: Ենթադրվում է, որ այդ քարակոթողները եղել են երկրագործությունն ու ոռոգումը հովանավորող, ջրի պաշտամունքն անձնավորող աստվածությունների կուռքեր:





Ամռան ամիսներին տարածքում հատկապես ակտիվ է ներքին զբոսաշրջությունը, մինչդեռ աշնան, ձմռան և գարնան ամիսներին ամեն ինչ «կանգ է առնում»: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ տուրիզմի ոլորտի առաջընթաց զարգացման համար անհրաժեշտ է զբոսաշրջային ծառայություններ մատուցող հաստատությունների շուրջտարվա աշխատանքը:

Սևանա լճի ափամերձ տարածքներում զբոսաշրջային հիմնական կառույցները և որոշակի հարմարություններ ունեցող լողափերը մեծամասամբ տեղակայված են լճի հյուսիս արևմտյան մասում՝ Սևանի թերակղզու հարակից տարածքում: Սակայն ամառային սեզոնի ավարտից հետո այս տարածքները նույնպես ամայանում են:

Ձմռան ամիսներին համեմատաբար ակտիվ գործում են խոշոր հանգստյան տներն ու համալիրները: Սակայն այստեղ ևս չկա ձմեռային հանգստի համար անհրաժեշտ ենթակառուցվածք՝ դահուկային սպորտով զբաղվելու հնարավորություն, բուժական կենտրոններ և այլն, ինչը ձմռանն ամիսներին տարածքը դարձնում է անմրցունակ Ծաղկաձորի կամ Դիլիջանի համեմատությամբ:

Մինչդեռ այստեղ կան դահուկային սպորտի կազմակերպման համար համապատասխան բոլոր պայմանները, ձմեռն ձնառատ է, բազմաթիվ են հարմար լեռնալանջերը և բլուրները: Նպատակահարմար է զարգացնել նաև ձմեռային այլ մարզաձևեր, որոնք այնքան տարածված են, օրինակ՝ Ծաղկաձորում: Դրա համար

անհրաժեշտ է ձևավորել զբոսաշրջիկների բազաներ/բնակատեղիներ՝ կապելով դրանք սպորտային և հանգստյան գոտիների հետ:

Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագծով առանձնացված են սպորտային կառույցների գոտիներ: Ճիշտ օգտագործելով այս հատվածները, կարելի է ստեղծել լողի, թեթև աթլետիկայի, հեծանվասպորտի ենթակառուցվածքները զարգացնելու լավ հնարավորություններ: Հիմնելով ձմեռային սպորտաձևերի ենթակառուցվածք՝ սահադաշտեր, դահուկային սպորտաձևերի համար նախատեսված գոտիներ և այլ անհրաժեշտ կառույցներ, կարելի է խթանել ձմեռային սեզոնին մարզիկների, ինչպես նաև առողջ ապրելակերպի հետևորդների երկարաժամկետ այցելությունները:

Վերը նշված նպատակները դրված են ներկայումս ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվող “Սևանա լճի ափին բարձր լեռնային մարզական կենտրոն հիմնադրելու գործարար ծրագրի” հիմքում: Ծրագրով նախատեսվում է ստեղծել բարձր լեռնային արհեստավարժ մարզական կենտրոնի և գերժամանակակից զբոսաշրջության վայրի յուրահատուկ համադրություն: Հայաստանի բարձր լեռնային մարզական կենտրոնի ստեղծումը հնարավորություն կընձեռի Հայաստանը դառննելու յուրահատուկ վայր զբոսաշրջության՝ դեռևս քիչ զարգացած մի ոլորտում, որը կներգրավի սպորտի պրոֆեսիոնալներ և սիրողական մարզիկներ, ինչպես նաև մարզասեր ընտանիքներ:

Ծաղկածորում, Դիլիջանում, Տաթևում կամ Ջերմուկում լայնորեն կիրառվում և զարգանում է զբոսաշրջիկներին գյուղական կացարանների տրամադրման գործառույթը, ինչը որոշակի եկամուտ է ապահովում նշված համայնքների բնակչությանը: Սա ևս մեկ միջոց է, որը նպատակահարմար է կիրառել Սևանին հարակից գյուղերում: Նմանատիպ գործառույթ Սևանի տարածքում առայժմ չի կիրառվում՝ անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայության պատճառով:

Սևանը շրջապատող գյուղերը զբոսաշրջիկների համար գրավիչ դարձնելու առաջին պայմաններից է՝ ինժեներական և սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքով ապահովումը, կարևոր պայմաններից է նաև գյուղական տների ներքին և արտաքին բարեկարգումը և գյուղական միջավայրի գեղատեսիլ լինելը, լանդշաֆտների կազմակերպման պատշաճ մակարդակը և այլն: Վերը նշված գործառույթների զարգացման նպատակով է նաև առանձնացվում «Սևան» ազգային պարկի սահմանից դեպի ցամաք «500 մետրանոց գոտին», որը ճշգրտվելով համայնքների գլխավոր հատակագծերի մշակման շրջանակներում, ապահովելու է ռեկրեացիոն գործառույթների զարգացման համար նպաստավոր տարածքներում կանոնակարգված և որոշակի չափանիշներ ապահովող կառուցապատման իրականացումը:

Սևանա լճի ջրավազանի առողջարարական ռեսուրսներն են՝ բարձրլեռնային կլիման, լեռնային մաքուր օդը, ջերմաստիճանային ռեժիմը, օպտիմալ խոնավությունը, արևաշատությունը, ինտենսիվ ուլտրամանուշակագույն ճառագայթումը, հանքային բուժիչ ջրերի և ցեխաբուժական ռեսուրսների առկայությունը, գեղատեսիլ լանդշաֆտները: Դրանք հիմնականում կենտրոնացած են արևմտյան և հարավային ափամերձ տարածքներում՝ Գավառ, Մարտունի բնակավայրերի շրջակայքում: Լիճք-Մարտունի, Գավառ-Նորատուսի և Վարդենիսի հատվածներում, հաշվի առնելով բնական բուժիչ պաշարների առկայությունը (հանքային ջուր, ցեխ և տորֆ), կարելի է զարգացնել շուրջտարյա գործունեությամբ առողջարանային համալիրներ:

Ձմռանը ուլտրամանուշակագույն ճառագայթների նվազումը թուլացնում է արևաբուժության էֆեկտը և կլիմայաբուժության հիմնական ձևերը հանդիսանում են բուժական հանգիստը, չափավորված զբոսանքները և այլն: Կայուն ձյունածածկի, բնական տերասների առկայությունը նախադրյալներ են ստեղծում ձմեռային սպորտաձևերի զարգացման համար: Ամռանը կլիմայաբուժական պայմանները բարենպաստ են օդային և արևային լոգանքներ ընդունելու համար:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու բարենպաստ բնական պայմանները, պատմության և մշակույթի բազմաթիվ հուշարձանների առկայությունը լավագույն հնարավորություններ են զբոսաշրջային և ռեկրեացիոն գործունեության կազմակերպման համար:



Գծագրեր՝
 32_1_Արևափայլի ուժգնություն,
 32_2_Տորիստրական, առողջարանային համակարգերի տեղաբաշխման և տարածքային կազմակերպման ուրվագիծ,

10. Զբոսաշրջային ճանաչողական արահետներ

Զբոսաշրջային ճանաչողական, ուսումնական արահետները ստեղծվում են հանգստի համար նախատեսված բնական լանդշաֆտի հատվածներում՝ բնապահպանական ռեժիմի պահպանման պայմանով: Հատուկ կազմակերպված արահետները՝ գրավելով այցելուների հիմնական զանգվածը, զգալիորեն նվազեցնում են ռեկրեացիոն բեռնվածությունը այլ՝ արգելոցային, արգելավայրային և առավել արժեքավոր ու խոցելի /թռչունների բնակեցման վայրեր, հազվագյուտ

բուսատեսակներով ծածկված տարածքներ, էրոզիայի ենթարկվող լանջեր, ցածրադիր և ճահճացած հատվածներ/ բնական հատվածների վրա:

Արահետների գրավչությունը ապահովվում է բազմատեսակ՝ բնական, պատմամշակութային օբյեկտների և հանգստի համար նախատեսված հատվածների հաջորդականությամբ: Լանջերի բարձրունքներին, ժայռերի վրա, տեսողական ընկալման համար այլ բարենպաստ հատվածներում տեղադրվում են բարեկարգված դիտահարթակներ: Այդ նպատակով կարելի է օգտագործել ինչպես առկա պատմական շինություններ, այնպես էլ հատուկ կառուցված դիտաաշտարակներ, որոնցից կբացվեն ընդարձակ համայնապատկերներ:

Արահետները դասակարգվում են ըստ բարդության /ինքնուրույն, խմբակային/, ըստ երկարության և ճանապարհի երկարատևության /առավել նպատակահարմար են 3-4 կմ երթուղիները/, ըստ տեղաշարժման եղանակների /հետիոտն, հեծանիվային, հեծյալ, դահուկային և այլն/:

Արահետները, կախված տեղանքի առանձնահատկություններից, կարող են լինել գծային, շրջանաձև, ոլորապտույտ, շարավիղային: Գիտատեղեկատվական ուղղվածությունը կարող է լինել պատմամշակութային, բուսաբանական, կենդանաբանական, երկրաբանական, թռչնաբանական, բնա-պատմական և այլն: Արահետի երկայնքով առանձնացվում են հատուկ տեղեր, հազվադեպ բույսերով ծածկված հարթակների կամ կենդանիների և թռչունների համար ստեղծված ցանկապատված տարածքներ, տեղեկատվական ցուցանակների վրա ներկայացվում են դրանց արտաքին տեսքը և համառոտ նկարագրությունը:

Արահետների երկայնքով ըստ անհրաժեշտության տեղադրում են աստիճաններ, բազրիքներ, հենապատեր, աղբամաններ, կարող են լինել տախտակամած հատվածներ, կամրջակներ, երթուղային նշաններ, բարեկարգված /ջուր, զուգարան/ հատվածներ կարճատև հանգստի համար: Արահետի սկզբնամասում տեղադրում է երթուղու ուրվագիծը՝ կանգառների և դիտարժան օբյեկտների նշահարմամբ:

Ազգային պարկի այն համայնքային հատվածները, որոնք ներառում են ամբողջովին կամ առավելապես արգելոցային գոտիներ և դրանց օգտագործման հնարավորությունները

Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշմամբ հաստատված “Սևան” ազգային պարկի կանոնադրության Պարկի արգելոցային և արգելավայրային գոտիների տարածքներում թույլատրվում են՝


- 1) արգելոցների ճանաչողական զբոսաշրջության երթուղիներում հանգստի տարավայրերի և դիտակետերի տեղադրումը.
- 2) արգելավայրերում էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող երևույթներն ու գործընթացները կանխարգելող, ինչպես նաև խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումները.
- 3) տարածքի սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության աշխատանքների իրականացումը:

Արգելոցային և արգելավայրային գոտիների տարածք միաժամանակ կարող են մուտք գործել ոչ ավելի, քան 30 անձ, առավելագույնը՝ 3 ժամով:

Արգելոցային և արգելավայրային գոտիներ մուտքը թույլատրվում է շաբաթվա բոլոր օրերին, ժամը 10⁰⁰-18⁰⁰-ն՝ կազմակերպության կամ լիազորված պետական մարմնի կողմից տրված անցագրերով:

Ստորև ներկայացված են համայնքային հատվածներում ընդգրկված արգելոցային այն հատվածները, որոնք լավագույն հնարավորություններ են տալիս բնության ճանաչողական արահետների կազմակերպման համար: Նշված օգտագործման տեսակը՝ ունենալով նվազագույն անտրոպոգեն ազդեցություն, նպաստելու է բնապահպանական ռեժիմի պահպանմանը, արգելոցային հատվածների լանդշաֆտների բարելավմանը և բարեկարգ գրավիչ միջավայրի ստեղծմանը:

Ծակրար




Ծովակ



Գեղամասար




Նորատուս




Անմիջապես ջրին հարող արգելոցային հատվածներն արտակարգ հնարավորություններ են ստեղծում բնական լանդշաֆտի պահպանման համար՝ ողջ բազմազանությամբ:

Լիճք




Նորակերտ



Նորաշեն.

Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով Նորաշենի արգելոցի զգալի մասը ջրածածկվելու է: Այստեղ բնակվող ճայերը աստիճանաբար կզրկվեն իրենց համար սովորական բնական միջավայրից: Դժվար է կանխատեսել՝ կտեղափոխվեն արդյոք ճայերը նոր ցամաքային հատվածների վրա՝ խորանալով դեպի ցամաք, թե ընդհանրապես կլքեն իրենց բնակատեղին: Այսօր արդեն կանխատեսելով ստեղծվելիք իրավիճակը, կարելի է կառուցել արհեստական կղզյակ /կղզյակներ/, որը հարմար կլինի ճայերի բնակվելու համար և լանդշաֆտի դիտարժան դոմինանտ կծառայի, օրինակ, որպես բնության ճանաչողական արահետի ավարտական կետ:



Գծագրեր՝

36_1_Դիպահրապարակներ. Կտրվածք

36_2_Դիպահրապարակներ. Կտրվածք

11. Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներին և դրանց որակական կազմին ներկայացվող պահանջները

Կանաչապատման համակարգի հիմնական տարատեսակներն են՝

1) Մանկական այգի – նախատեսվում է բնության զրկում խաղերի, զվարճանքի, ֆիզիկական մարզանքների համար.

	<p><i>Օրինակ՝</i></p> <p><i>Մանկական կենդանաբանական այգի Վիենայում</i></p> <p>1. թափերական ներկայացումների համար հարմարեցված կանաչ հրապարակ</p> <p>2. նապաստակների մարզագետին</p> <p>3. գյուղական բակ</p> <p>4. աղավնատուն</p> <p>5. մարզագետին</p> <p>6. փոքրիկ պոնիների վրա ծիավարելու հարթակ</p> <p>7. գառնուկների մարզագետին</p> <p>8. սկյուռիկների տնակներ</p> <p>9. տնային թռչունների հարթակ</p>	
		

2) Բուսաբանական այգի – գիտահետազոտական աշխատանքների և միաժամանակ հանգստի համար նախատեսված բազմատեսակ ծառերով և բույսերով պատված այգի.

3) Ազգագրական այգի – բնական լանդշաֆտի ֆոնի վրա յուրահատուկ բնակելի, կենցաղային շինությունների, կենցաղային առարկաների և աշխատանքային գործիքների, կիրառական արվեստի նմուշների և այլնի ցուցադրություն /օրինակ, կարող է լինել ձկնորսության հետ կապված տեսարաններ, առարկաներ և այլն/:

4) Ակտիվ հանգստի, զվարճանքի այգի – կանաչապատված տարածք, որտեղ տեղադրվում են ատրակցիոններ, խաղահրապարակներ, ճոճանակներ և այլն:

5) Մարգագետինային պարկ – բարեկարգված մարգագետին, որի ռեկրեացիոն որակը հարստացրած է առանձին ծառերով, թփերով և ծաղիկներով:



Սևանա լիճը շրջապատող լեռնահովիտներից

6) Առողջարանային պարկ - բարենպաստ բնական և առողջարանային պայմաններ ունեցող տարածք, որն օգտագործվում է հանգստի և առողջացման նպատակներով.

7) Բնության պարկ – բնական և մշակութային լանդշաֆտների պահպանման տարածք, որը առանձնանում է գեղագիտական բնապատկերներով,


ռեկրեացիոն բարձր հատկանիշներով և օգտագործվում է ռեկրեացիայի, գիտական հետազոտությունների և լուսավորչական նպատակներով.

8) Լանդշաֆտային այգի /բնապատկերային/ - բնական կամ մշակութային գրավիչ լանդշաֆտ, որոշ դեպքերում արհեստականորեն ստեղծված, օգտագործվում է ռեկրեացիոն նպատակներով.



1	լանդշաֆտային այգու հիմնական մուտքեր
2	այգու անկանոն հատվածներ
3	այգու կանոնավոր հատվածներ
4	փիլիսոփայական այգի
5	ձմեռային այգի /ջերմոց/
6	շատրվան
7	հասարակական բնույթի կառուցապատում
8	լճակ

9) Պարկային ուղի – ավտոմոբիլային կամ հետիորն ճանապարհ, որը անցնում է գեղատեսիլ վայրերով և կապում է հանգստի առանձին վայրերը:



10) Ռոք պարտեզ – քարքարոտ այգի, որը արտացոլում է լեռնային լանդշաֆտի և բուսական աշխարհի գեղեցկությունը /ժայռերի, ջրվեժների և ալպիական բույսերի ներդաշնակ համադրություն/

11) Մոդուլային այգի – ծաղկանոցի ձևավորում, որը կառուցված է պարբերաբար կրկնվող երկրաչափական մոդուլային համակարգի վրա: Դրանք կարող են լինել քառակուսի ուրվագծով հատվածներ, միատեսակ կամ տարբեր ձևավորմամբ /ծաղիկներով, դեկորատիվ ծառերով, թփերով, սիզամարգով, ճալաքարով, ավազով և այլն/.

12) Մոնոայգի – այգի, որը կազմված է մեկ տեսակի ծաղիկներով կամ բույսերով / վարդեր, կակաչներ և այլն/.

13) Պարտերային այգի /պարտեզ/ - կանոնավոր ոճի այգի, սիզամարգային հրապարակներով, ծաղկանոցներով, ջրավազաններով և կանոնավոր կտրվածքով ծառեր՝ գնդաձև, խորանարդաձև և այլն.

14) Ջրապաշտպան կանաչապատում - ասիի պարագծով իրականացվող կանաչապատում, ջրի գոլորշիացման և աղտոտման նվազեցման նպատակով

15) Քամուց պաշտպանող կանաչապատում – քամու ռեժիմի հաշվառմամբ տեղադրված կանաչապատում, որի շնորհիվ կարելի է նվազեցնել քամու արագությունը 50 - 80%: Քամուց պատսպարող շերտի արդյունավետությունը կախված է քամու ուղղության նկատմամբ կանաչ շերտի ուղղվածությունից, ծառերի և թփերի խտությունից և բարձրությունից: Քամուց պաշտպանող հատկությունները կախված են նաև ծառատեսակներից, մասնավորապես, տերևաթափից հետո, սաղարթատերև ծառերի պաշտպանիչ հատկությունները կտրուկ նվազում են, իսկ փշատերև մշտադալար ծառատեսակները պահպանում են իրենց հատկությունները նաև ձմռանը.

16) Արևապաշտպան կանաչապատում – կարող են լինել շարքային, խմբային, առանձին կանգնած: Ստվերի չափերը կախված են խտությունից, ծառերի չափերից, ձևից և դիրքից:

17) Դեկորատիվ-պաշտպանիչ կանաչապատում - օգտագործվում են շենքերի, շինությունների, հենապատերի ցանկապատերի առջև, դեկորատիվ կամ ճակատների աշխուժացման նպատակով:



Ապագայի տեսիլք

14.1. Ավտոմոբիլային ճանապարհների կանաչապատում. Տրանսպորտային գոտու և լողափի բուֆերային գոտու միջև բաժանիչ կանաչապատման գոտի

Ավտոմոբիլային ճանապարհների կանաչապատման հիմնական խնդիրներն են՝ ճանապարհների և դրանց կոնստրուկտիվ տարրերի պաշտպանությունը անբարենպաստ եղանակային/կլիմայական գործոններից, ճանապարհամերձ տարածքների պաշտպանությունը երթևեկության հետևանքով առաջացող աղտոտումներից, ճանապարհի տարրերի բարեկարգումը և ճարտարապետա-գեղարվեստական ձևավորումը, ինչպես նաև՝ վարորդների տեսողական կողմնորոշման ապահովումը: Այս երեք խնդիրներն էլ ծառայում են մի նպատակի՝ ավտոմոբիլային ճանապարհների օգտագործողների և ճանապարհներին կից տարածքներում բնակվող մարդկանց համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Դեկորատիվ ծառային և թփային տնկումները, հանդիսանում են ճանապարհամերձ գոտու ձևավորման ճարտարապետա-գեղարվեստական լավագույն միջոցներից մեկը:

Դեկորատիվ կանաչապատման համար կիրառում են 3 հիմնական մոտեցում՝ կանոնավոր /ծառուղային կամ շարքային տնկումներ/, լանդշաֆտա-խմբային /ազատ/ և խառը:

Կանոնավոր կանաչապատումը նախատեսում է ծառերի, թփերի կամ միանման կառուցվածքի խմբերի որոշակի տեղադրում ուղիղ կամ կանոնավոր կոր գծերով: Առանձին բույսերի կամ դրանց խմբերի շարքերի միջև հեռավորությունը մնում է հաստատուն տվյալ տիպի ձևավորման հողամասի ողջ սահմաններում: Այս մոտեցումը կիրառում են ճանապարհների այն տեղամասերում, որոնք անցնում են հարթավայրային տեղանքով:

Լանդշաֆտախմբային կամ ազատ մոտեցումը ենթադրում է ծառերի և թփերի ազատ տեղադրում՝ առանձին տարրերի կամ տարբեր չափերի խմբերի տեսքով: Խմբերի, առանձին բույսերի միջև հեռավորությունները և ճանապարհից ունեցած հեռավորությունները տատանվում են և սահմանափակվում են միայն կանաչապատման գոտու չափով: Այս մոտեցումը կիրառում են հիմնականում ճանապարհների այն տեղամասերում, որոնք անցնում են բլրային կամ ալիքավոր ռելիեֆ ունեցող տարածքներով:

Դեկորատիվ էֆֆեկտի և սաղարթների ազատ զարգացման համար, կախված տնկվող ծառերի մեծությունից՝ դրանց միջև հեռավորությունները ընդունում են 5-20մ: Երիտասարդ տնկիների տնկման ժամանակ, արագ դեկորատիվ էֆֆեկտ ստանալու համար ընդունում են նվազագույն թույլատրելի հեռավորությունը ծառերի շարքերի միջև /առավելագույնից 2-4 անգամ փոքր/:



Տնկումների հատուկ տեսակները օգտագործում են ճանապարհների բաժանիչ գոտիների կանաչապատման համար: Դրանք հետապնդում են ոչ միայն ճարտարապետա-գեղարվեստական ձևավորման նպատակը, այլև երթևեկության անվտանգության ապահովումը: Որպես կանոն, բաժանիչ գոտու վրա իրականացնում են թփերի հոծ գծի տնկում, կամ լայնական թուփ-կուլիսների/ միաշարք կամ երկշարք կենդանի պատնեշների/ տեսքով: Դրանք տեղադրում են 20-30 մ հեռավորության վրա և երթևեկելի մասից նվազագույնը 1,75 մ հեռավորության վրա: Այսպիսի տնկումները մեքենաների լուսարձակների լույսից պաշտպանում են դրանց հակառակ շարժվող վարորդներին:

Ավտոմոբիլային ճանապարհների դեկորատիվ կանաչապատման համար կիրառում են 4-6 տարեկան ծառերի տնկիներ և 2-3 տարեկան թփեր:


Ստորև ներկայացված են “Սևան” ազգային պարկին հարող այն համայնքային հատվածները, որոնցում, ըստ գոյնընդհանուր նախագծի, նախատեսված են ավտոմոբիլային ճանապարհների և լողափի բուֆերային գոյու միջև բաժանիչ կանաչապարման գոյու կազմակերպում՝ ավտոմոբիլային ճանապարհների կանաչապարման և միաշամանակ որպես բուֆերային գոյին եզրափակող ծառուղի ծառայելու համար: Բավականաչափ երկարություն ունեցող գոյիները կարող են կազմակերպվել իբրև պարկային ուղի՝ բազմազանելով ճանապարհային մոնոտոն փեսարանները:

Այն հատվածներում, որտեղ կանաչապարման նեղ շերտը լայնանում և սրանում է ուղղանկյուն, եռանկյունաձև կամ սեղանաձև ուրվագիծ, առաջանում են պուրակների և այգիների հիմնադրման համար հարմարավետ հատվածներ: Կախված առկա լանդշաֆտի առանձնահատկություններից, այդ հատվածներում կարելի է ստեղծել ոռոգ պարտեզ, մոդուլային այգի, մոնոայգի, պարտեզ և այլն:


Աստղածոր








Ծովագյուղ



Չկալովկա




<u>Դրախտիկ</u>	
<u>Ջիլ</u>	
<u>Կարմիրգյուղ</u>	
<u>Լճաշեն</u>	
<u>Վաղաշեն</u>	


14.2. Լողափի բուֆերային գոտու եզրագծային կանաչապատում

Ստորև ներկայացված են այն համայնքային հատվածները, որտեղ գոյություն ունի առանձնացվել են լողափերի կազմակերպման համար բարենպաստ հատվածներ: Այս հատվածներում առկա են բոլոր պայմանները բարձրակարգ և հարմարավետ՝ ինչպես հանրային, այնպես էլ՝ մասնավոր լողափերի կազմակերպման համար: Հանրային օգտագործման կանաչապատման կամ բնական լանդշաֆտի պահպանման գոտիները կձառայեն ինչպես գործառնական, այնպես էլ գեղագիտական նպատակներին:


Երանոս



Գեղարքունիք




Կարճաղբյուր




Լճավան



Ներքին
Գետաշեն



Վարդաձոր



Հայրավանք




Պատմամշակութային հուշարձանի պահպանական գոտին պարփակող ընդհանուր օգտագործման կանաչ գոտու շերտը հնարավորություն է տալիս ստեղծել արտաքին աղմուկից և ակտիվ գործառույթներով լի միջավայրից մեկուսացված հանդարտ միկրոմիջավայր, որը կնպաստի հուշարձանի համար յուրահատուկ մթնոլորտի պահպանմանը:

Ձորագյուղ



14.3. Բնական լանդշաֆտի պահպանման գոտու միջով անցումների կանոնակարգում՝ ընդհանուր օգտագործման կանաչ հատվածների միջոցով

Ծովինար




Դարանակ



Կալավան




Ջուլարար



Փանթակ







Բնական լանդշաֆտի պահպանության գոտու միջով լողափի և լողափի բուֆերային գոտիների հետ կապ ապահովելու և միաժամանակ բնական լանդշաֆտի վրա անտրոպոգեն ազդեցությունը սահմանափակելու նպատակով, գոտևորման նախագծով նախատեսված ընդհանուր օգտագործման կանաչ գոտիների միջոցով ստեղծված լայնական կապերը հարմար են ծառուղիների, բուլվարների և կանաչապատ հետիոտն ճանապարհների ստեղծման համար:

14.4. Ուղղանկյուն մոնոլիթ կանաչ փարածքներ, կառուցապատման գոտիների միջև բաժանիչ կանաչ շերտեր


Մարտունի



Վարդենիկ



Արծվանիստ



Արեգունի




Աղբերք




Ծափաթաղ




Կառուցապար
ված
հարվածների
կանաչապարմ
ան օրինակ




Սևան



Կառուցապար
ված
հարվածների
կանաչապարմ
ան օրինակ



Շորժա



14.5. Կանաչ զանգվածներ

Համաչափ լայնություն և երկարություն ունեցող կանաչ զանգվածները, կախված մակերեսից, հարմար են լանդշաֆտային պարկերի, քաղաքային տիպի պարկերի, պուրակների, ինչպես նաև բուսաբանական այգիների ստեղծման համար: Ստեղծվող պարկի կամ պուրակի հատակագծային հորինվածքի ընտրությունը պետք է պայմանավորված լինի տեղանքի բնական կամ քաղաքաշինական միջավայրի հատկանիշներով: Կառուցապարված հարվածներին կից տարածքների կանաչապարումը գերադասելի է ընտրել կանոնավոր հատակագծման սկզբունքներով, իսկ բնական լճային, կամ արգելոցային հարվածներին կից տեղանքը՝ ազատ հատակագծման սկզբունքով, ստեղծելով բարեկարգ և բոլոր մանրամասներում մտածված բնական միջավայր հիշեցնող այգի կամ պուրակ:


Արտանիշ




Բերդկունք



Ծովագարդ



Գալստ



Լճափ



12. Բարեկարգման և կանաչապատման կանոններ՝ թույլատրելի բուսատեսակներ և տեղադրման սկզբունքներ (ուղղաձիգ կանաչապատում, ճամփեզրեր, ցանկապատում՝ քամու, արևի և այլ գործոններից)

Սևանա լճի ավազանում առաջարկվող կանաչապատման կազմակերպման հիմնական ձևերն են. անտառապարկերը, նոսրանտառները, ծառաթփային խմբերը, առանձին կանգնած ծառերը, ծառուղիները, կանաչ ցանկապատերը, ուղղաձիգ կանաչապատումը, սիզամարգերը, ծաղկանոցները:

Անտառապարկերում ծառապատ տարածքների շնորհիվ վերարտադրվում է անտառային լանդշաֆտը: Դրանց կազմակերպման համար անհրաժեշտ է 2-ից 4 հա տարածք պարկի կազմակերպման համար և տասնյակ հեկտարներ՝ անտառապարկերի համար:

Նոսրանտառները սովորաբար կազմում են մեկ տեսակի ծառերից, դրանց կազմակերպման համար անհրաժեշտ է 0.25-1.0 հա տարածք /կամ 50-200 ծառ/: Նոսրանտառի տեսքը և էմոցիոնալ ազդեցությունը պայմանավորվում է ծառատեսակների /կաղնի, սոճի, սոսի, եղևնի, լորենի, թղկի և այլն/ դեկորատիվ որակներով:

Ծառերի և թփերի խմբերը կազմվում են դեկորատիվ և էկոլոգիական տեսակետից համատեղելի ծառատեսակներից և թփերից: Կարևոր է նաև դրանց բնորոշող ձևը, ճյուղերի նկարվածքը և ուրվագիծը: Առանձին ծառերի և թփերի տեղադիրքը որոշվում է հաշվի առնելով դրանց 3 -5 տարի հետո լիարժեք զարգացած չափերը:

Ծառուղիները ձևավորվում են կախված կլիմայական պայմանների առանձնահատկություններից: Խիտ տնկարկները, արագ զարգանալով, ստեղծում են ստվերոտ թաղանձ միջանցք, որն արևից և քամուց պաշտպանված զբոսանքների համար լավագույն միջավայրերից է:

Կանաչ ցանկապատերը, ծառերի և թփերի ձևավոր կտրվածքը օգտագործվում է փողոցների ձևավորման, այգիների պարսպապատման, փոքր ճարտարապետական ձևերը ընդգծելու, ամառային թատրոնների, համերգահրապարակների և սպորտային հրապարակների եզրագծման համար: Այդ նպատակներով օգտագործվում են ծառերից՝ եղևնին, սաստափոտ կամ թեփուկատերև նոճի, գիհի, լորենի, ծփի, բոխի, հաճարենի, թխկի, թփերից՝ ալոճենի, հոնի և եղևանու թփեր:

Ուղղաձիգ կանաչապատումը փաթաթվող բուսատեսակներով կիրառվում է ստվերային և քամուց պաշտպանող էկրանների ստեղծման, շենքերի ճակատների ձևավորման, ինչպես նաև առանձին կառույցների կամ դրանց ճակատների խուլ

մասերի քողարկման, պատշգամբների, լոջիաների, զրուցարանների, ինչպես նաև թենիսի դաշտերի պարագծերը կանաչապատելու համար: Փաթաթվող բույսերի որոշ տեսակները (վայրի խաղողի տարբեր տեսակներ, գլիցինիա չինական և այլն) կարող են բարձրանալ մինչև 15-20մ:

Դեկորատիվ սիզամարգը ստեղծվում է հատուկ խոտաբույսերի, բազմամյա հատիկաբույսերի ցանքերի միջոցով: Սիզամարգերը զբաղեցնում են կանաչապատված տարածքների զգալի մասը և լինում են պարտերային, այգեպուրակային, մարգագետինային: Պարտերային սիզամարգերը տեղադրում են հասարակական շենքերի, հուշարձանների, դեկորատիվ ջրավազանների, շատրվանների, քանդակների մոտ: Սովորական սիզամարգերի համար օգտագործվում են մի քանի տեսակի բազմամյա ցորեններ, ապահովելով դրանց դիմադրողականությունը և երկարակյացությունը: Մարգագետինային սիզամարգերը ստեղծվում են խոշոր պարկերում, բնական խոտածածկույթի բարելավման միջոցով:

Ծաղկանոցները՝ պարկերի, այգիների, պուրակների, ճեմուղիների ձևավորման հիմնական միջոցներից են: Հասարակական շենքերի, արձանների, փողոցների, հրապարակների մոտ օգտագործում են ծաղկանոցների ձևավորման կանոնավոր ձևերը:

Պարկերի, այգեպուրակային համակարգերի և այլ կանաչապատ տարածքների նախագծման և կազմակերպման հիմնական գեղագիտական սկզբունքներն են.

- Առանձին մասերի միասնականություն և համաչափություն. Առանձին մասերի և ամբողջի համաչափություն, բնապատկերի հավասարակշռվածություն: Կանոնավոր հատակագծման դեպքում հավասարակշռությանը հասնում են առանձին տարրերի կամ դրանց միջև հեռավորությունների կրկնությամբ հատակագծային առանցքի նկատմամբ: Ազատ հատակագծման դեպքում հավասարակշռությունը ապահովվում է առանձին տարրերի և հեռավորությունների այնպիսի ընտրությամբ և տեղադիրքով, որ բոլոր հիմնական դիտակետերից փոքր և մեծ էլեմենտները դիտվեն հավասարակշռված՝ մոտ և հեռու դիտակետերից, ինչպես նաև տարբեր տարրերի քանակական տարբերության /առանձին կանգնած խոշոր ծառ, փոքր թփերի խումբ և այլն/ հաշվին:
- Մասշտաբ. Հորինվածքի ներդաշնակությունը կախված է նաև միմյանց նկատմամբ առանձին տարրերի չափերի հարաբերությունից: Մասշտաբայնությունը՝ օբյեկտի չափերի համապատասխանությունն է մարդու ֆիզիկական չափերին և նրա տեղաշարժման արագությանը: Մասշտաբայնության չափանիշ է դիտարկվում նաև չափերի համապատասխանությունը տարածքի գործառնական նշանակությանը:

Օրինակ, շինարարության և շահագործման օպտիմալությունից ելնելով՝ սիզամարգերը նպատակահարմար է կազմակերպել առնվազն 100-200 մ² մակերեսով: Մեծերի հանգստի և 4-6 տարեկան երեխաների համար սիզամարգերի չափերը սովորաբար սահմանափակվում են 100-150 մ² –ով: Խոտի վրա մասայական հանգստի գոտի կազմակերպելու համար պահանջվում է 6000-7000 մ² հողատարածք:

- Կոնտրաստ. Խիստ տարբերվող առարկաների համադրությունը ընդգծում է դրանք տարբերակող հատկությունները: Այդ սկզբունքով են կազմվում կանաչապատման հորինվածքների զգալի մասը: Շենքի հարթ տանիքն ընդգծում են շենքի մոտ բրգաձև բարձր ծառեր տեղադրելով, լանջավոր տանիք ունեցող շենքերի մոտ՝ գնդաձև սաղարթամաս ունեցող ծառերի միջոցով: Կոնտրաստի էֆեկտը ստեղծվում է օգտագործելով ծառատեսակների ուրվագծի, տերևների չափերի, գույների տարբերությունները:
- Ոճ. Այգիների և պարկերի կազմակերպման ոճական առանձնահատկությունները պայմանավորված են այգեպարկային արվեստի հարուստ պատմությամբ: Այգիների և պարկերի տարածական կառուցվածքի երկու հիմնական ձևերն են՝ կանոնավոր և բնապատկերային /ազատ/ հատակագծումը: Կիրառվում են նաև դրանց համադրությամբ՝ խառը հատակագծման ձևերը:
- Ուիթմ. Այգու կամ պարկի հորինվածքային միասնականությունը, կանոնակարգված բազմազանությունը կարելի է արտահայտել է նաև ռիթմիկ օրինաչափությունների օգտագործմամբ:





Քամուց և արևից պաշտպանող կանաչապատում

Մարդու համար առավել բարենպաստ քամու ռեժիմը 0,5-ից 3,0 մ/վ սահմաններում է՝ երբ թեթև խշխշում են տերևները: Կիրառելով կանաչ տնկարկների տարբեր կառուցվածքներ և տեղադրման ձևեր կարելի է ազդել օդի հոսանքների, դրանց ուղղությունների և արագության վրա: Քամու նկատմամբ անմիջանցիկ կառուցվածքի խումբն իրենից ներկայացնում է իրար միացող ծառերի սաղարթամասերի և տարբեր բարձրության թփերի խիտ լուսանցքներ չունեցող շերտ: Այդպիսի խմբերը հիմնականում ստեղծվում են եռաստիճան, ներքևի շարքում՝ անդուկենու, բոնչենու թփեր, միջին շարքում՝ թխկի, լորենի, վերևի շարքում՝ կաղնի: Կանաչապատման այս կառուցվածքը զգալիորեն նվազեցնում է քամու արագությունը:

15 -17 մ բարձրություն ունեցող ծառերի և թփերի 8 շարքից կազմված շերտը պաշտպանում է քամու ազդեցությունից ծառերի 30-ից-40 բարձրությանը հավասար հեռավորության վրա, որից հետո քամու արագությունը վերականգնվում է:

Կանաչապատման ծակոտկեն կառուցվածքի դեպքում քանու հոսքի մի մասը ներթափանցում է կանաչ զանգվածից ներս, զգալի չափով կորցնելով արագությունը: Անմիջանցիկ կառուցվածքի համեմատ, ծակոտկեն կանաչ շերտից հետո քանու արագությունը նվազում է պակաս չափով, սակայն այդ ազդեցությունը տարածվում է ավելի մեծ՝ ծառերի 40-50 բարձրությանը հավասար հեռավորության վրա:

Քանուց պաշտպանիչ ծակոտկեն կառուցվածքն էֆեկտիվ է հետիոտն ճանապարհների, խաղահրապարակների և հարթակների համար, որոնք պետք է տեղադրվեն քանու ուղղությանը հակառակ:

Կանաչ զանգվածների քանուց պաշտպանող հատկությունների բնութագրերը՝ կախված դրանց լայնական կտրվածքից				
				
Անմիջանցիկ	35	42	30	48
Ծակոտկեն	50	45	42	47
Միջանցիկ	55	60	50	56


Կառույցի մոտ քանու արագության նվազեցման համար շենքի առջև կարելի է տեղադրել ծակոտկեն կառուցվածքով կանաչապատ շերտ՝ շենքի 2-ից 5 բարձրություններին հավասար հեռավորության վրա:

Ծակոտկեն կառուցվածք ունեցող կանաչապատ շերտով անցնելիս, քամին բաժանվում է երկու հոսանքի՝ ներքևինը անցնում է ծառերի սաղարթամասերի միջև, վերևինը՝ սաղարթամասերի վերևով, որի արդյունքում քանու արագությունը նվազում է ոչ մեծ չափով, սակայն այդ նվազեցումը պահպանվում է 50-ից 60 շերտի բարձրությանը հավասար հեռավորության վրա:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ կանոնավոր կտրվածքով ալոճից պատնեշը իջեցնում է քանու արագությունը 2,3 –ից 0,4մ/վ, ծառերի և թփերի գծային շերտը՝ 2,6-ից 0,4մ/վ, բարձր սաղարթամասով ծառերը՝ 2,7-ից 2,1մ/վ:

Լավ միկրոկլիմայական պայմաններ են ստեղծվում 3 մետրից ավելի բարձր տեղադիրք ունեցող սաղարթամասերով ծառերի տակ: Այս դեպքում ապահովվում է լավ ստվերացումը և նորմալ օդափոխությունը: Կախված քանու արագությունից և ուժգնությունից քամիների գերիշխող ուղղությամբ տեղադրվող կանաչապատման շերտի լայնությունը կարող է լինել մինչև 20-30 մ և ավելին:

Կանաչապարտ տարածքների բարեկարգման օրինակելի միջոցներ






13. Կառուցապատման հորինվածքային և ճարտարապետահատակագծային սկզբունքներ

Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքն իրենից ներկայացնում է բարձր լեռներով շրջապատված եռանկյունաձև գոգավորություն, որը միջլեռնային խոշոր տեկտոնական իջվածք է: Իջվածքի հատակային մասը զբաղեցնում է Սևանա լիճը, որի հատակը ծովի մակերևույթից բարձր է մոտ 1800 - 1820 մետր, իսկ շրջակա լեռների առանձին գագաթների բարձրությունը հասնում է մինչև 3600 մ: Ավազանը եզրավորում են՝ արևմուտքից Գեղամա (Աժդահակ 3598 մ), հարավից՝ Վարդենիսի (Վարդենիս՝ 3520 մ), հրաբխային լեռնավահանները, հյուսիս - արևելքից՝ Արեգունու, արևելքից՝ Սևանի (Հինալ՝ 3367 մ) և Արևելյան Սևանի լեռնաշղթաները: Արտանիշ և Նորատուս հրվանդանների միջև ձգված է մի ստորերկրյա պատնեշ, որով լիճը բաժանվում է երկու ավազանի՝ Մեծ Սևանի և Փոքր Սևանի:




Հաշվի առնելով տարածքի բնական հորինվածքը նախընտրելի է ավամերձ տարածքների կառուցապատման համար կիրառել.

- օղակաձև-շարավիղային հատակագծային հորինվածք՝ Սևանա լճի կենտրոնական մասը դիտարկելով որպես հատակագծային հորինվածքի կենտրոն:
- նախատեսել դեպի լողափ իջնող՝ հարմար ճանապարհներ, անցումներ և ճեմուղիներ,
- շենքերի գլխավոր ճակատները բացել դեպի Սևանա լիճ
- դիտարկել կառուցապատման համայնապատկերը լճի կողմից /ջրային ճակատ/ ապահովելով կառուցապատման և շրջապատող լեռների ներդաշնակությունը
- շենքերի բարձրությունները և տեղադիրքը պետք է ընտրվեն այնպես, որ չփակեն դեպի լիճ բացվող տեսարանները
- զգալի ռելիեֆի դեպքում կառուցապատման հիմնական առանցքները պետք է կրկնեն ռելիեֆի առանձնահատկությունները, ներդաշնակորեն ներգծվելով բնական միջավայրի մեջ:



Իտալիայի Կոմո լիճը և հարակից բնակավայրերը. լճի հարևանությամբ գտնվող գյուղերը, մասնավորապես, փոքրիկ Պերլեդո գյուղաքաղաքը տեղադրված են այնպես, որ չնայած բավականաչափ մեծ հեռավորությանը ունեն բազմաթիվ

դիտակետեր, որտեղից բացվում են հրաշալի տեսարաններ դեպի լիճը, ինչը և հրապուրում է զբոսաշրջիկներին այցելել այդ վայրը:



14. Կառույցների առանձին տարրեր. պատեր, տանիքներ, պատուհաններ, դռներ և այլն: Թույլատրելի գունային լուծումներ (պալիտրա) և շինարարական նյութեր

Տարածքում իրականացվող կառուցապատման համար պենք է կիրառվեն միայն բնական, էկոլոգիապես անվնաս շինարարական նյութեր: Գունային լուծումները պետք է ներդաշնակ լինեն շրջակա միջավայրի բնական պալիտրային: Շենքերի հիմնական տարրերը գերադասելի է լուծել մեղմ գույներով՝ օգտագործելով օխրայի, տերակոտաների, մոխրագույնի և դարչնագույնի բոլոր երանգները: Որոշ դեպքերում՝ կոնտրաստային շեշտեր ստեղծելու նպատակով հնարավոր է նաև արհեստական վառ գույների օգտագործումը՝ ժամանակավոր կառույցների, բարեկարգման առանձին էլեմենտների /նստարաններ, աղբամաններ, գովազդային ստենդեր և այլն/ համար:

**Կառույցի առանձին տարրեր երեսապատման թույլատրելի նյութեր.
Թույլատրելի գունային լուծումներ**

Պատեր

Բնական քար, աղյուս,
բնական քարե սալիկներով
երասապատում:
Սպիտակ, օխրայի բլուր
երանգներ, տերրակոտա, բաց
մոխրագույն, շրջակա միջավայրին
ներդաշնակ գունային պալիտրա



Ճակատային ներկ /ցեմենտ սվաղով հարդարված պատերի վրայով/ բնական շինանյութին բնորոշ գույներ, վառ կամ արհեստական գույների ոչ զանգվածային կիրառում՝ միայն առանձին տարրերի վրա:



Բնական կանաչով ծածկված պատեր /կիրառելի է հատկապես կառույցները բարեկարգելու, մոնոտոն պատերի տեսքն աշխուժացնելու և գեղարվեստական շունչ հաղորդելու նպատակով:



Ուղղաձիգ կանաչապատումը յուրահատուկ կերպար է հաղորդում հատկապես բնակելի տան պատերի ձևավորման դեպքում



Տանիքներ
Շենքի 5-րդ ճակատ,
Կղմինդր, մետաղե կղմինդր՝
բնական գունային լուծումներով,
մուք, հանգիտ գույներով ներկված
թիթեղ:




Դռներ և պատուհաններ
Գերադասելի են բնական
նյութերից շրջանակները,
պատուհանների շրջանակները,
պատի և շրջակա միջավայրի հետ
ներդաշնակ գույներով





Ապխատակ



Պատշգամբներ և տերասներ
Արտակարգ հնարավորություն են ստեղծում լողափնյա տարածքը ընդարձակելու համար, բացօթյա և միևնույն ժամանակ մեկուսացված միջավայրում հանգիստը անցկացնելու ցանկացողների համար



15. Փոքր ճարտարապետական ձևեր. ցանկապատեր, նստարաններ, լուսամփոփներ, շատրվաններ, ջրավազաններ, լողափերի կահավորանք, բաց և փակ առևտրի կետեր և այլն

Կանաչապատման և բարեկարգման բախկացուցիչ մաս են հանդիսանում փոքր ճարտարապետական ձևերը: Դրանք կարող են լինել կիրառական, դեկորատիվ, խաղային կամ սպորտային նշանակության:

Դիտարկվում է փոքր ճարտարապետական ձևերի երկու խումբ՝ բույսերի դեկորատիվ հատկությունների օգտագործմամբ /տրեյլաժներ, պերգուլաներ, ծաղկանոցներ և այլն/ և առանց բույսերի կիրառման /քանդակներ, դեկորատիվ քարեր և այլն /:

Հաշվի առնելով, որ փոքր ճարտարապետական ձևերը մշտապես գտնվում են մարդու տեսադաշտում, ազդելով նրա էսթետիկական զգացողության վրա, դրանք պետք է լինեն չձանձրացնող, տեխնիկապես կատարյալ, պլաստիկ, հարմար, պարզ և արտահայտիչ՝ ըստ ձևի, գույնի, ֆակտուրայի, ինչպես նաև լինեն երկարակյաց, ունենան լավ համաչափություններ և համապատասխանեն մարդու մասշտաբին:

Ցանկացած պարկում, պարտեզում կամ պուրակում հիմնական դերը պատկանում է կանաչ զանգվածներին, ծառերի և թփերի առանձին խմբերին,

ռելիեֆին և ջրային մակերեսներին: Փոքր ճարտարապետական ձևերը պետք է լինեն բնապատկերի ընդհանուր հորինվածքին և տարածքի հատակագծային լուծումներին համաչափ:

Փոքր ճարտարապետական ձևերի առանձին տեսակներ.

Զրուցարան, շվարարան կանաչապատված տարածքում կարճատև հանգստի համար տեղադրվող թեթև ճարտարապետական շինություն: Զրուցարանների ձևը, չափերը, կոնստրուկցիան ընտրում են կախված լանդշաֆտի բնույթից: Գերադասելի է փայտե թեթև կոնստրուկցիաների կիրառումը, որոշ դեպքերում կարելի է օգտագործել նաև ապակի, մետաղ, ապակեպլաստիկ: Զրուցարանների չափերը ընտրում են այնպես, որ տեղավորվեն մեկ կամ երկու նստարան և սեղան /զրուցարանների համար տարածված չափեր են՝ 3,5x3,5 մ կամ 5,0x5,0 մ համապատասխանաբար 2,5մ և 3,0մ բարձրությունով/:



Արևից պաշտպանելու նպատակով զրուցարանները կառուցում են թեթև օդափոխվող կոնստրուկցիաներով /տրեյլաժներից/, հոծ կամ ցանցավոր ծածկով: Ամբողջ զրուցարանը պատվում է կանաչով /փաթաթվող բույսերով/, պաշտպանում է քամուց և ստեղծում հանգստի համար մեկուսացված տարածք: Զրուցարաններ տեղադրելիս անհրաժեշտ է հաշվի առնել ռելիեֆի առանձնահատկությունները, լճի եզրագիծը, լանդշաֆտային հորինվածքը, բաց տարածքների առկայությունը, ճեմուղիների և ծառուղիների ուղղությունները, ճարտարապետական օբյեկտների տեղադրությունը: Նպատակահարմար է տեղադրել զրուցարանները բարձրունքների վրա, այնպես, որ դրանցից բացվեն գեղեցիկ տեսարաններ, ջրապատկերներ և այլն:


Տաղավար, կրպակ.

Թեթև կոնստրուկցիաներով կառույց՝ կենցաղային սպասարկման համար: Տաղավարները և կրպակները պետք է կատարվեն պարզ կոնստրուկցիաներով, նրբագեղ ճարտարապետությամբ, միջավայրին և մարդուն համաչափ մասշտաբով, լուսային գովազդով: Լուսավորության, գույնի, շինարարական նյութի /մետաղ, փայտ, ջրակայուն ֆաներա, նրբատախտակ, ապակեպլաստիկ, ապակեբլոկեր/ ընտրությունը պետք է թելադրված լինի շրջակա միջավայրով: Թերթերի, մթերքի վաճառքի համար նախատեսված կրպակները տեղադրվում են մարդկանց հիմնական հոսքերի հաշվառումով:



Ամառային սրճարանների տաղավարներ.

գերադասելի է տեղադրել գեղատեսիլ հատվածներում, ներդաշնակորեն ներգծելով դրանք շրջակա միջավայրի մեջ: Ամառային սրճարանների տաղավարները նպատակահարմար է տեղադրել դեպի լիճ կամ գեղեցիկ բնապատկերներ նայող բաց տերասների վրա: Անհրաժեշտության դեպքում դրանց մոտ կազմակերպում են փոքրիկ տնտեսական հարթակներ, որոնք թաքցնում են հանգստացողների և այցելուների տեսադաշտից դեկորատիվ պատերով, տրեյաժներով և կանոնավոր ձևով կտրված թփերով:



Պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանները այցելող զբոսաշրջիկների սպասարկման համար անհրաժեշտ սանհանգույցները, կրպակները և տաղավարները պետք է տեղադրվեն այնպես, որ լինեն աննկատ, չխաթարեն կազմավորված համալիրի ամբողջականությունը և դուրս լինեն դեպի հուշարձանը բացվող հիմնական տեսարաններից:

Տրեյաժ. Թեթև վանդակաձև ազատ կանգնած ուղղաձիգ կարկաս, որը ձևավորվում է փաթաթվող կամ կից աճող բույսերով: Օգտագործվում է հանգստի հարթակների, զրուցարանների, նստարանների, տնտեսական հարթակների պատսպարման կամ մեկուսացման, շենքերի խուլ պատերի, մուտքերի ձևավորման համար, քանդակների և շատրվանների համար ուղղաձիգ ֆոն ստեղծելու նպատակով: Տրեյաժները պատրաստում են տարբեր տրամագծի մետաղաձողերից,

մետաղալարերից, փայտե ձողերից, երկաթետոնից /հիմքերի համար/: Կարկասը պետք է ներկվի աննկատ, ընդհանուր միջավայրին ներդաշնակ, մեղմ գույներով:

Պերգոլա. Թեթև դեկորատիվ կառուցվածք է կազմված կանգնակներից ու ծածկի հորիզոնական տարրերից, կամ կամարներից ու կիսակամարներից, ունի ծակոտկեն ծածկ և հենարան է ծառայում փաթաթվող բույսերի համար, ինչպիսին են վայրի խաղողը, հմուլը, գայլուկը, այծաթուփը, պատասուկը, գլիցինիան, փաթաթվող վարդերը և այլ բույսերը: Պերգոլաների կրող կանգնակները պատրաստում են փայտից, աղյուսից, քարից, մետաղից, որոշ դեպքերում կարող են լինել նաև բարձր որակի բետոնից:

Վանդակավոր կամ գծավոր ծածկը՝ փայտե չորսուներից, մետաղյա ձողերից, անկյունակներից, խողովակներից, առանձին երկաթետոնե էլեմենտներից: Պերգոլաների նպատակահարմար բարձրությունն ընդունվում է 2,5-ից 3,0 մ, լայնությունը՝ 2-ից 3,0 մ :



Այգեպուրակային կահույք.

Նստարանները բարեկարգման անհրաժեշտ էլեմենտներից են: Դրանք տեղադրվում են հարթակների վրա, շատրվանների, ծաղկանոցների, սիզամարգերի, ջրի ափի մոտ, զրուցարաններում և ծառերի ստվերում:



Կարճատև հանգստի համար տեղադրում են առանց թիկնակի նստարաններ, իսկ համեմատաբար երկարատև հանգստի համար՝ թիկնակով: Նստարանների հենարանները պատրաստում են մետաղից, քարից կամ բետոնից, նստատեղի և մեջքի համար նպատակահարմար է օգտագործել դյուրին մշակվող փայտանյութ: Փայտե էլեմենտները ծածկում են հատուկ անգույն լաքով: Որոշ դեպքերում նստարանները կարելի է պատրաստել նաև բետոնից: Այս դեպքում հնարավոր է ստանալ գունավոր արտահայտիչ սահուն ձևեր, որոնք լավ կներգծվեն շրջակա





միջավայրի մեջ: Ուղղանկյուն հարթակի կամ ուղիղ ճանապարհի վրա հիմնականում տեղադրվում են ուղիղ նստարաններ, շրջանաձև կամ օվալաձև հարթակների վրա առավել ներդաշնակ են սահուն ձևեր ունեցող նստարանները: Դիտահարթակների վրա կարելի է տեղադրել օձաձև նստարաններ, որոնք թույլ կտան դիտարկել բացվող համայնապատկերը տարբեր անկյունների տակ: Նստարանները կարող են օգտագործվել նաև որպես բաժանիչ էլեմենտ հարթակի և ծաղկանոցի կամ սիզամարգի միջև: Ամռանը օգտագործվում է նաև շարժական կահույք՝ բազմոցներ, պարտեզային աթոռներ, նստարաններ և այլն: Դրանք պետք է լինեն թեթև, հարմար և գեղեցիկ: Կարող են լինել վառ գույների, գործած բնական վազերից կամ պլաստմասե թելերից: Փայտե նստարանները տեղադրում են լճի ափին, հետիոտն ճանապարհների երկու կողմերից, հարթակների եզրերին՝ 200-ից 250մ հեռավորությամբ՝ հիմնական ուղղությունների վրա և 500-ից 600 մ հեռավորությամբ՝ երկրորդական ուղղությունների վրա: Մեկ հեկտարի վրա խորհուրդ է տրվում տեղադրել 30-ից 60 նստարան: Միևնույն ժամանակ, նստարանների և այլ փոքր

ճարտարապետական ձևերի քանակը որոշվում է տարածքի գրավչությունից կախված, սակայն դրանք չպետք է ծանրաբեռնեն պարկի կամ այգու տարածքը:

Բացի սեղաններից և նստարաններից այգիներում և անտառապարկերում տեղադրում են անձրևապաշտպան ծածկեր, մանրամարզության համար նախատեսված հարթակներ, տեղեկատվական վահանակներ, տարբեր բնույթի քանդակներ, ցայտաղբյուրներ և այլն:


Քանդակը այգիների, պարկերի և այլ կանաչապատ տարածքների ձևավորման կարևոր էլեմենտներից է: Դեկորատիվ քանդակը, որպես կանոն, պետք է լինի ոչ մեծ չափերի, ունենա պլաստիկ ձևեր և «կամերային» բնույթ: Քանդակը պետք է համաչափ լինի միջավայրին՝ գլխավոր և երկրորդական կառույցներին, ծառուղիների և պարտերների լայնությանը, ծառերի և թփերի չափերին, մարդու մասշտաբին: Քանդակի ստեղծման համար պետք է օգտագործվեն ամուր և երկարակյաց նյութեր՝ գրանիտ, մարմար, կրաքար, բրոնզ: Քանդակի գեղարվեստական հատկությունները կարելի է շեշտել «կանաչ» ֆոնի օգնությամբ:



Մուգ կանաչ ծառերի ֆոնին լավ է ընկալվում բաց քանդակը /մարմար, կրաքար/, բաց կանաչ և ոսկեգույն տերևներ ունեցող ծառերի ֆոնին լավ են դիտվում մուգ նյութից պատրաստած քանդակները՝ գրանիտ, բրոնզ, թուջ: Պատվանդանի և դրա վրա տեղադրած քանդակի բարձրության դասական հարաբերությունը ծառուղու լայնության նկատմամբ ընդունվում է 1:3: Այդ համաչափությունը ստեղծում է

բարենպաստ պայմաններ քանդակը դիտելու համար և չի խոչընդոտում մարդկանց տեղաշարժմանը:

Դեկորատիվ քար, կամ բնական քարերի խումբ. Օգտագործվում է լանդշաֆտի հարստացման համար: Կարելի է օգտագործել ինչպես պարկի համար նախատեսված բնական լանդշաֆտում առկա քարերը, այնպես էլ արհեստական ռելիեֆի ստեղծման նպատակով: Հետաքրքիր ուրվագծով խոշոր քարերից կազմում են յուրահատուկ բնական քանդակներ, որոնք տեղադրում են սիզամարգերի վրա: Պետք է հաշվի առնել, որ կլոր հարթ ուրվագիծ ունեցող ծովային քարերը, գլաքարերը որպես կանոն չեն տեղադրում ժայռային ծագում ունեցող քարերի հետ: Մանր քարերը և խիճը օգտագործում են հորիզոնական հարթակների ձևավորման համար՝ հատուկ բույսերի, ծաղիկների և քարերի խմբերի համադրությամբ: Առանձնահատուկ տպավորություն են ստեղծում քարերը ջրային մակերեսների հետ համադրությամբ՝ ներգծվելով ափամերձ լանդշաֆտի մեջ:



Դեկորատիվ պատ. Հոժ կամ ծակոտկեն, ազատ ուրվագծով առանձին կանգնած պատ, որն օգտագործվում է կանաչապատ տարածքների տարբեր հատվածների տարանջատման համար, հետիոտն շարժման ուղիների տեղանշման, առանձին հատվածների մեկուսացման համար: Դեկորատիվ պատերը կարող են լինել քարից, երկաթբետոնից, կերամիկայից, ապակեպլաստիկից: Գերադասելի են բնական քարի ֆակտուրան, ձևը և գույնը պահպանող պատերը: Որոշ դեպքերում այդպիսի պատը կարող է լրացվել քանդակով կամ բարելիեֆով, ջրային փոքրիկ մակերեսներով, ծաղկանոցներով և այլն: Դեկորատիվ պատի բարձրությունը և չափերն ընդունվում են կախված դրա նպատակաուղղվածությունից:

Ցանկապատ, պարիսպ, պատնեշ, հենապատ.

Լողափի գոտում բաժանիչ պարիսպների կամ ցանկապատերի տեղադրումը արգելված է: Բուֆերային գոտում առանձին տարածքային հատվածներ կարող են սահմանազատվել ուղղահայաց




կանաչապատմամբ ցանկապատերի /մինչև 1.5 մ բարձրությամբ/ կամ բուսական պատնեշների տեղադրման միջոցով:

Այլ տարածքներում ցանկապատերը, պարիսպները, պատնեշները և հենապատերը կիրառվում են առանձին հատվածների մեկուսացման, մարդկանց մուտքը սահմանափակելու կամ արգելելու, կանաչապատ հատվածների պաշտպանության համար: Կարելի է օգտագործել քար, թուջ, պողպատ, բետոն, փայտ և դրանց տարբեր համադրություններ: Ցանկապատերի, պարիսպների, պատնեշների, հենապատերի դեկորատիվ ձևը պետք է ներդաշնակ լինի միջավայրին, մոտակայքում գտնվող ճարտարապետական կառույցներին, և կանաչապատման տարրերին:



Որոշ դեպքերում ցանկապատման կամ պարսպապատման դեր կարող են կատարել կանաչ տնկարկները: Ցանկապատերը, պարիսպները, պատնեշները լինում են բարձր՝ 2.5 – 3.0 մ –ից բարձր, միջին՝ 1.0 – 1.2 մ, և ցածր՝ 0.3 – 0.5 մ: Բարձրները տեղադրում են հիվանդանոցների, առողջարանների, ցուցահանդեսների, կենդանաբանական այգիների և այլ համալիրների պատսպարման համար, միջինները՝ ափամերձ փողոցների, պուրակների, մայրուղիների առանձին հատվածներում, ցածրերը՝ ծաղկանոցների և սիզամարգերի շուրջ:



Փողոցների և հրապարակների մայթերի վրա տեղադրվող ծառերի բները տրորումից և հողի չափազանց խտացումից պաշտպանելու նպատակով ծառի շուրջ տեղադրվում են հարթ թուջե էլեմենտներից հավաքած ծակոտկեն ծածկեր: Նույն


նպատակով կարելի է նաև ծածկել ծառի բունը շրջապատող հողը խոշոր ճալաքարով կամ մանրախիճով.

Տեղեկատվական ցուցանակներ. Տեղադրվում են պարկերում, անտառապարկերում, ճանաչողական արահետների երթուղիների վրա, ճանապարհների և ծառուղիների բարդ ցանցերի խաչմերուկներում: Սխեմաների, նշանների տեսքով ներկայացվող գրաֆիկական տեղեկատվությունը պետք է լինի մատչելի և պատկերավոր: Կարճատև տեղեկատվությունը, պաստառները, գովազդային վահանակները նպատակահարմար է տեղադրել այգիների և պարկերի մուտքերի մոտ:

Ավտոմատ սարքեր թերթերի, ծխախոտի, գազավորված ջրի վաճառքի համար, հետախոս-ավտոմատներ և այլն: Դրանց տեղադրումը կապված է էլեկտրականության, ջրագծի, հեռախոսագծի, ջրահեռացման համակարգի առկայության հետ: Ավտոմատները նպատակահարմար է տեղադրել մարդկանց մեծ կուտակումների տեղերում, հրապարակներում, գլխավոր ծառուղիների և հետիոտն մայրուղիների մոտ: Ավտոմատ սարքերի դիզայնը պետք է համադրելի լինի միջավայրի և շրջակա կանաչ տնկարկների հետ, լինելով գրավիչ և աչքի ընկնող, չլինի ճչացող և հոգնեցնող:

Աղբամաններ /աղբարկղեր/

Տեղադրում են հանգստի հարթակներում, հասարակական և մշակութային հաստատությունների մոտ, հետիոտն ծառուղիների, ճանապարհների, կրպակների և այլնի մոտ: Աղբամանները նպատակահարմար է պատրաստել հրակայուն նյութերից, հիմնականում՝ մետաղից, մետաղական ցանցից: Դրանք կարող են լինել ցանկացած ձևի, բայց պետք է լինեն ոչ մեծ, կայուն և ամուր, ինչպես նաև պետք է հարմար լինեն մաքրման և վնասագերծման համար: Աղբամանները հանդիսանում են տարածքի ձևավորման փոքր դեկորատիվ տարրեր: Դրանք պետք է բավարարեն երկու պահանջների՝ մի կողմից պետք է անհրաժեշտության դեպքում լինեն նկատելի, և մյուս կողմից չպետք է անընդհատ աչքի ընկնեն: Նստարանների մոտ աղբամանները տեղադրում են մի փոքր հեռավորության վրա, երկու նստարանին մեկ աղբաման հաշվարկով:



Այգիներում և պարկերում կարող են լինել ոճավորված ջրհորներ, ջրավազաններում՝ տնակներ թռչունների համար և այլն:



Ափամերձ զրոստուղի և դիպահարթակ



Ծառի բունը պաշտպանված դեկորատիվ ծակոպկեն թուջե ծածկով



Հեղիտյուն ճանապարհի և ծառապարված հատվանների միջև բեկորնե միջին բարձրության եզրապատ



Քանդակ



Կամրջակ



Զրուցարան,



Աղբամանի տեղադրում



Զրուցարան



Պերգոլա



Կղզակ



Նստարան, ծառի պաշտպանիչ պատուպարում



Այգեպուրակային կահավորանք



Այգեպուրակային կահավորանք



Այգեպուրակային կահավորանք



Այգեպուրակային կահավորանք



Նստարաններ



աղբաման



Քարե նստարան



Ստորգետնյա ինժեներական ցանցերի լուկ



16. Ճանապարհների, անցումների, մայթերի ծածկույթներին և կահավորանքին ներկայացվող պահանջները, ինժեներական գծերի և սարքավորումների տեղադրման կանոնները

Ճանապարհների երկարակյածությունը պայմանավորվում է կիրառվող կոնստրուկցիայով և շինարարական նյութերով, որոնք պետք է ընտրվեն կախված տրանսպորտի շարժման ինտենսիվությունից, կլիմայական և ինժեներատեխնիկական պայմաններից, միկրոռելիեֆից և տեղական շինարարական նյութերի առկայությունից: Փողոցները և ճանապարհները կարող են ունենալ հետևյալ հիմնական էլեմենտները՝ երթևեկելի մաս, մայթեր, հետիոտն և հեծանիվային ճանապարհներ, կանաչապատման և բաժանիչ գծեր, հողաթումբերի և փորվածքների դարալանջեր, ջրհոսքի բաց համակարգի ճամփեզրերը և կյուվետները, հենապատեր, տեխնիկական և ռեզերվային շերտեր, հասարակական տրանսպորտի և ավտոմեքենաների կանգառներ: Փողոցների և ճանապարհների լայնությունը սահմանափակվում է կարմիր գծերով:




Ճանապարհների արգելապարը կարող է սպեղծել որոշակի կերպար



Ճանապարհի երկայնքով հեծանվորդների համար առանձնացված ուղի

Միապաղաղ միջավայրում ճանապարհի արգելապատի գույնը լանդշաֆտն ընդգծող որոշիչ դերում է



Քաղաքային տիպի կառուցապատման հատվածներում ճանապարհի կանաչապատման օրինակ

Երթևեկելի մասը մայթերից և մայթերը կառուցապատման գծից բաժանելու նպատակով օգտագործում են կանաչ տնկարկների շերտերը: Տեխնիկական շերտերը նախատեսվում են ստորերկրյա ինժեներական ցանցերի տեղադրման համար, ռեզերվային շերտերը՝ փողոցի վերակառուցման և երթևեկելի մասը հետագայում լայնացնելու համար:

Ճանապարհաձածկերը պետք է լինեն հարթ, փոշի չառաջացնող և ապահովեն նորմատիվային պահանջները: Ինժեներական ցանցերը չի թույլատրվում տեղադրել փողոցների երթևեկելի մասի տակ, դրանք տեղադրում են տեխնիկական կամ կանաչապատման գոտիների շերտերի տակ: Էլեկտրագծերը տեղադրում են 0.6-0.8 մ խորության վրա, մի քանիգծի /կաբելի/ դեպքում դրանք տեղադրում են իրարից .15մ հեռավորության վրա: Զրագծերը և կոյուղագծերը տեղադրվում են գրունտի սառեցման նիշից ցածր: Ճանապարհի երկայնքով ստեղծում են կանաչ գոտիներ՝ ծառերի մեկ շարքով տեղադրմամբ: Ծառերը տնկում են հեռավորության երթևեկելի մասի եզրից 2.5-3.0 մ-ի վրա, թփերը՝ 1.0 մ: Ծառերի միջև հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 5.0մ, թփերի միջև՝ 1.0մ, երկշարք կանաչ պատնեշների կազմակերպման դեպքում՝ 0.3-0.5մ: Շենքերի ճակատներից ծառերի հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս 5.0մ, թփերինը՝ 1.5 մ: Հետիոտն անցումների և հասարակական տրանսպորտի կանգառների մոտ 10 մ հեռավորության վրա չի կարելի տնկել 0.5մ –ից ավելին բարձրություն ունեցող ծառեր և թփեր:

17. Լուսավորության համակարգի տեղադրման կանոնները

Կանաչապատ տարածքների արհեստական լուսավորություն. Կանաչ տարածքների արհեստական լուսավորության սկզբունքները խիստ տարբերվում են այլ տարածքների լուսավորության սկզբունքներից: Սովորական փողոցային լուսամփոփները չեն կարող լիարժեքորեն ընդգծել բույսերի դեկորատիվ հատկությունները:



Պարկերում, այգիներում և մայրուղիների վրա կարևոր նշանակություն ունեն արհեստական լուսավորության գեղագիտական հատկությունները, որոնց շնորհիվ ստեղծվում է երեկոյան լանդշաֆտների հանդիսավոր և այցելուների համար գրավիչ միջավայրը:

Կիրառվում են լուսավորության սարքավորումների երկու տեսակներ՝ ուտիլիտար և դեկորատիվ: Առաջինները ապահովում են ծառուղիների և հանգստի հարթակների հավասարաչափ լուսավորությունը, երկրորդները՝ լուսավորում են առանձին շենքեր, շինություններ, քանդակներ, փոքր ճարտարապետական ձևեր, շատրվաններ, ծառեր, թփեր և ծաղիկներ:

Պարկերի և այգիների տարածքների առանձին հատվածների լուսավորությունը պետք է լինի տարբերակված, ինչպես ընդհանուր բնույթով, այնպես էլ լուսատեխնիկական հատկություններով: Ակտիվ հանգստի գոտում, որտեղ տեղադրված են շենքերի, շինությունների և հարթակների մեծ մասը, լուսավորության սարքերը պետք է ստեղծեն հանդիսավորության տպավորություն, լուսավորման միջոցներով ընդգծելով առավել հետաքրքիր օբյեկտները: Երեկոյան աշխատող ատրակցիոնների ընդարձակ հարթակները, մեծ հրապարակները նպատակահարմար է լուսավորել բարձր հենարանների վրա տեղադրված հզոր լուսամարմիններով:

Յուրահանդեսների, կինոթատրոնների, ռեստորանների, սրճարանների լուսավորությունը կարող է լուծվել ոչ բարձր հենարանների վրա տեղադրված լուսամփոփներով: Միաժամանակ կարելի է լուսավորել կառույցները և կանաչապատման տարրերը:

Մեկուսացված հանգստի գոտիներում պետք է կիրառվի ավելի մեղմ լուսավորություն՝ ոչ բարձր լուսամփոփներով, դրանցում օգտագործելով նաև սովորական լամպեր, ինչպես նաև սառը լուսարձակման լամպեր:



Երկրորդական ծառուղիները գերադասելի է լուսավորել կիրառելով ուղված և ցրված լույսի աղբյուրներ, տեղադրելով դրանք կախված հզորությունից՝ 15-ից 20մ հեռավորության և 3-ից 4 մ բարձրության վրա:

Լուսամփոփների տեղադրությունը պետք է հաշվի առնի տարածքի ընդհանուր ճարտարապետահատակագծային լուծումները, բույսերի տեղադրության հորինվածքը, առկա շինությունները /սրճարաններ, կրպակներ, խաղասրահներ և այլն/, հիմնական տեղաշարժերի ուղղությունները, բնապատկերների հետևողական ընկալումը, առանձին օբյեկտների շեշտադրման անհրաժեշտությունը: Գունավոր լուսավորության կիրառումը պետք է լինի զգուշավոր, քանի ոչ չափազանց տարբեր և վառ գույներով լուսավորությունը հոգնեցնող է և նվազեցնում է բնական լանդշաֆտների գեղեցկությունը:

Տարածքի ճարտարապետա-գեղարվեստական և ինժեներական լուծումների միասնականության ապահովման համար անհրաժեշտ է նաև կազմակերպել ծառերի, թփերի, ծաղիկների, սիզամարգերի, պարկային կառույցների, փոքր ճարտարապետական ձևերի, ջրավազանների, շատրվանների, քանդակների դեկորատիվ լուսավորությունը:

Լուսամփոփների և լուսավորության այլ սարքերի ձևի, տեսակի, հենարանների ուրվագծի ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև պարկի տարածքի ռելիեֆը՝ օգտագործելով և ընդգծելով դրա առանձնահատկությունները: